ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**

I SSN 1829- 3468
15027 >
9 771829 346006

ՇԱԲԱԹ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.
№ 27 (370)

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

***Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն 2015թ. դեկտեմբերի 6-ին նշանակելու մասին:***



ՖՈՏՈԼՈՒՐ

# Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է Սյունիքի մարզ

**Նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 13-ին աշխատանքային այցով եղել է Սյունիքի մարզում: Այցի շրջանակներում հանրապետության նախագահը ծանոթացել է Շաքի-Սիսիան-Տոլորս ճանապարհի շինարարության ընթացքին, հանդիպում ունեցել շահառու համայնքների բնակիչների հետ: Վերականգնվող ճանապարհը, որի ընդհանուր երկարությունը կազմում է 29.03 կմ, բաղկացած է երկու հատվածից: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 2.5 մլրդ դրամ: Առաջին հատվածի (Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհից մինչեւ Սիսիան քաղաքի վերջնամասը) շինարարական աշխատանքներն սկսվել են 2015թ. հունիսի 3-ից, ավարտը նախատեսված է 2016թ. հոկտեմբերի**

էջ 3

## ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Հասարակությունը պիտի ավելի համախմբված լինի, որպեսզի չարի սերմը բույն չդնի...»



***Հարցազրույց***

**Օգոստոսի 4-ին Ագարակում հնչած կրակոցների, դրանց հետեւանքների վերացման, քաղաքում իրականացվող ծրագրերի, ինչպես նաեւ դրանց խոչընդոտների մասին է զրույցն Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի հետ:**

**– Պարո՛ն Զաքարյան, օգոստոսի 4-ին Ագարակում հնչած կրակոցների վերաբերյալ մամուլում տարաբնույթ, հակասական կարծիքներ հնչեցին, ընդհուպ մինչեւ Ձեզ մեղադրանք ներկայացնելը: Կուզենայինք, որ Դուք՝ որպես համայնքի ղեկավար, գնահատեիք ստեղծված իրավիճակը:**

– Եթե պատկերավոր ասեմ, փոթորիկ մի բաժակ ջրում: Եղել է շարքային իրավախախտում, որին գնահատական կտանք դատարանի վճռից հետո: Վերջին անգամ Ագարակում կրակոց հնչել էր 4 տարի առաջ էլի նույն ընտանիքի անդամների կողմից: Իմ տեղեկություններով՝ տվյալ անձնավորությունը կրակել է, երիտասարդներն էլ նույնությամբ պատասխանել են: Բայց քննությունն ամեն ինչ կպարզի, այժմ նախաքննության փուլն է: Չգիտեմ՝ այդ մարդը նպատակ ունի հասարակության մեջ սեփական անձի դի՞րքը բարձրացնել, թե՞ չի հարմարվում քաղաքային համակեցության կանոններին: Նրանք միշտ իրենց օրենքից դուրս են կարծել եւ շրջապատին փորձել են պարտադրել սեփական հոռի բարքերը, բայց

էջ 4

# Կայացա՞ծ, թե՞ չկայացած քննարկում

***Ջրամատակարարում***

**Սեպտեմբերի 18-ին Կապանի քաղաքապետարանում «Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ- «ՋԻՆՋ» ՍՊԸ խորհրդատվական կազմակերպությունը կազմակերպել էր «հանրային իրազեկում», որ նպատակ ուներ ներկայացնել Ասիական զարգացման բանկի միջոցներով Կապանի ներքին ջրատար ցանցում կատարված եւ կատարվող շինարարական աշխատանքների ընթացքի մասին: Բայց քննարկման ներկաները, հատկապես տարբեր ՀԿ ներկայացուցիչներ, պնդեցին, որ հանրային քննարկման անցկացման օրենքի խախտում է տեղի ունեցել, այն է՝ քննարկումից առնվազն 7 օր առաջ պիտի տեղեկացնեին դրա անցկացման մասին: Արդյունքում շատերը լքեցին դահլիճը՝ պատճառաբանելով, որ թույլ չեն տա, որ փորձեն իրենց իրավունքները խախտել: «Հայգյուղշիննախագիծ» խորհրդատվական կազմակերպության հասարակայնության հետ կապերի փորձագետ Հասմիկ Ասլանյանը, թեեւ անընդհատ պնդում էր, որ սա հանրային քննարկում չէ, միեւնույնն է, ներկաների մեծամասնությունը պնդում էր, որ այս հավաքն այլ կերպ որակել չի կարելի: Մասնակիցների պնդմամբ՝ այս թեմայով կան բազում հարցեր, բայց պատշաճ կերպով տեղեկացված չլինելու պատճառով չէին նախապատրաստվել:**

Ինչեւէ, քննարկումը կայացավ, նրանք, ովքեր շարունակեցին մասնակցել «հանրային իրազեկմանը», հարցեր ուղղեցին կատարվող աշխատանքների պատասխանատուներին:

Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող այս ծրագրով վերանորոգվել է Կապան քաղաքի որոշ թաղամասերի բաշխիչ ներքին ցանցը, որ կազմում է  քաղաքի բաշխիչ ցանցի 30 տոկոսը: Եթե թվային տվյալների վերածենք, 109 բազմաբնակարան շենքերի մուտքագծերի կառուցում եւ 363 բաժանորդի ջրաչափական հանգույցների ու անհատական տների մուտքագծերի կառուցում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ:

Քաղաքապետարանի ծրագրերի եւ արտաքին կապերի բաժնի պետ Ավետիք Համբարձումյանը տեղեկացրեց, որ քաղաքի 10 հազար 600 բնակչի խմելու ջրի հարցն է լուծվել, իսկ 400 հոգու խնդիրը կլուծվի առաջիկա տարում:

Ա.Համբարձումյանը նշեց, որ քաղաքում մինչ այս խմելու ջրի  ստորգետնյա հատվածի նախագծային ցանց չի եղել, որի հետեւանքով շինարարության ընթացքում բազում տեխնիկական խնդիրներ են առաջացել: Նախագծերի բացակայության պատճառով միացումներից հետո որոշ տեղերում ջրամատակարարման հետ խնդիրներ են առաջացել, որ քաղաքապետարանը, համապատասխան մոնիթորինգ անցկացնելով, աստիճանաբար կարգավորում է: Կային տներ, որոնք նախագծից դուրս էին

էջ 5



# Նորամուտ՝ Ագարակի արվեստի դպրոցում

**Մեր օրերում դժվար է այցելել մի հաստատություն, որտեղ խնդիրներ չլինեն՝ կապված հատկապես շենքային պայմանների, կահավորանքի, համապատասխան կադրերի հետ:**

Գրեթե կեսդարյա պատմություն ունեցող Ագարակի արվեստի դպրոցի շենքը հիմնանորոգվել է Հայաստանի սոցներդրումների հիմնադրամի, որ վերանվանվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, միջոցներով, գույքը ձեռք է բերվել «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի միջոցներով, իսկ շենքի հարակից տարածքը բարեկարգվել եւ լուսավորվել է համայնքապետարանի ֆոնդային բյուջեով: Հիշեցնենք, որ սա ՀՀ նախագահի նախընտրական ծրագրի դրույթներից էր:

Շրջելով շենքի ողջ տարածքով՝ ականատես եղանք լուսավոր ու կահավորված, երաժշտական նոր գործիքներով, համապատասխան գույքով համալրված դասասենյակների. արվեստի աշխարհի մուտք գործելու նախապայմանն արդեն իրականություն է: Եվ ինչպես Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանը նշեց նորամուտի առթիվ. **«Կարծում եմ՝ ձեր կոլեկտիվն իր աշխատանքով արդեն ապացուցել է, որ արժանի է այսպիսի բարեկարգ դպրոց ունենալու, բայց, ինչպես ասում են, կատարելությունը սահման չունի, այժմ ձեր հերթն է նոր բարձունքներ նվաճելու: Մաղթում եմ բոլորիդ անձնական մեծ երջանկություն, ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ: Ցանկանում եմ, որ ամեն մի ագարակցի հպարտանա մեր արվեստի դպրոցի եւ նրա սաների հաջողություններով»:**

Աշխատանքային այցով Ագարակում էր նաեւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը, եւ խմբագիր Սամվել Ալեքսանյանը, շնորհավորելով ներկաներին նորամուտի առթիվ, հոգեւոր դաշտի հրամանատարներին՝ ուսուցիչներին, մաղթեց հաջողություն, հաճելի տրամադրություն, որպեսզի կարողանան շենքին վայել սերունդ դաստիարակել:

Արվեստի դպրոցի տնօրեն Հասմիկ Մարկոսյանը խոստացավ, որ դպրոցը լիարժեք կգործի որպես գեղագիտական դաստիարակության օջախ, որ բարեկարգված պայմանները լրացուցիչ խթան կհանդիսանան աշակերտների գիտելիքների կատարելագործման համար, եւ միջազգային փառատոներն անխուսափելի կլինեն:

Մ.Զաքարյանի համոզմամբ՝ երազանքները վեր են ածվում պլանների եւ իրագործվում, ինչպես մի ժամանակ արվեստի դպրոցի հիմնանորոգումն էր երազանք, այնպես էլ քաղաքում մարզական համա-

էջ 5

# Սեփական եկամուտների հավաքումը մնում է խնդրահարույց

*Մարզխորհրդի նիստում*

**Հոկտեմբերի 9-ին տեղի ունեցավ Սյունիքի մարզխորհրդի նիստ:**

Օրակարգի առաջին՝ մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման եւ աշնանացանի հետ կապված անելիքների մասին զեկուցեց մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Ներսես Շադունցը: Նա մասնավորապես նշեց, որ 2015-ին մարզում ավելացել է անասնագլխաքանակը. խոշոր եղջերավոր անասունների քանակը դարձավ 63321 գլուխ (աճը՝ 9,6 տոկոս), մանրինը՝ 125664 գլուխ (աճը՝ 9,2 տոկոս), խոզերի գլխաքանակը՝ 12364 գլուխ (աճը՝ մեկ տոկոս): Մարզի համայնքներում 2015թ. ինն ամսվա ընթացքում համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքման ընթացքը եւ առկա խնդիրները ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Հարություն Հովհաննիսյանը: Տարին մոտենում է եզրագծին, բայց 19 համայնք դեռեւս չի ապահովել սեփական եկամուտների 50 տոկոս հավաքում: Բանախոսը հրապարակեց թերացող համայնքների անունները՝ Վերին Գյոդաքլու, Տանձավեր, Ուժանիս, Քաջարան գյուղ, Նոր Աստղաբերդ, Բարձրավան, Հարթաշեն, Որոտան, Սվարանց, Դարպաս, Որոտան (Սիսիանի), Սոֆլու, Նժդեհ, Վաղատին, Ույծ, Կուրիս, Նռնաձոր, Տաշտուն, Բնունիս:

Մարզում քաղաքացիական պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքներին եւ առաջիկա անելիքներին էր նվիրված ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ Բագրատ Զաքարյանի ելույթը: Զեկուցողը թվերի եւ փաստերի լեզվով ներկայացրեց 2015-ի ինը ամսում Սյունիքի մարզում գրանցված արտակարգ իրավիճակները եւ պատահարները, մասնավորապես նշելով, որ Սյունիքի մարզի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում գրանցվել է 12437 զանգ:

Մարզում քաղաքաշինության ոլորտում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների եւ ծրագրերի մասին խոսեց մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Ռազմիկ Ավետիսյանը: Նրա ելույթից պարզ դարձավ, որ մարզի 109 համայնքից միայն հինգ քաղաքային (Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Ագարակ) եւ երկու գյուղական (Տաթեւ, Նռնաձոր) համայնքներն ունեն գլխավոր հատակագծեր: Մինչդեռ ըստ 1998 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության մասին» օրենքի 143 հոդվածի 32-րդ կետի՝ արգելվում է 2016 թվականի հունվարի 1-ից, առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի եւ ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը:

Ընդհանրապես զեկուցողների հաշվետվություններում աչքի էին զարնում փաստերի սոսկական թվարկումը, թվական տվյալների հրապարակումը, իսկ ահա ոլորտում ստեղծված իրավիճակի վերլուծության, մտահոգող հարցերի բարձրաձայնման եւ դրանց լուծման ուղիները մատնանշող խնդիրները հետին պլան էին մղվում: Մարզխորհրդին ներկա համայնքի ղեկավարները, կարծես, այնքան էլ մտահոգ չեն համայնքի առջեւ ծառացած խնդիրները բարձրաձայնելու: Ի՞նչ հարցեր ունեք, ի՞նչ հուզող խնդիրներ կան, հարցրեց մարզպետը եւ որոշ դադարից հետո ինքն էլ պատասխանեց. «Ամեն ինչ նորմալ է»: Այնուամենայնիվ, որոշ երկչոտ հարցեր եղան…

Մարզխորհրդի նիստի արդյունքներն ամփոփեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Որպես դրական ելույթ ներկայացվեց այն, որ առաջընթաց է գրանցվել քաղաքաշինության բնագավառում, մասնավորապես՝ առողջապահության ոլորտում. Մեղրիում եւ Կապանում շահագործման կհանձնվեն երկու բժշկական կենտրոն, Մեղրիում՝ նոր կառուցված, Կապանում՝ վերակառուցված: Մարզի ղեկավարը համայնքների ղեկավարներին հորդորեց սեփական եկամուտները ժամանակին հավաքել, նաեւ վերադարձնել պայմանագրով վերցված սերմացուի պարտքը, որ կուտակվել է դեռեւս անցած ու նախանցած տարիներից:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Աթլետիկայի ֆեդերացիայի նախագահը Կապանում

**Հոկտեմբերի 8-ին Սյունիքի մարզպետն ընդունեց Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Էմմիյանին:**

Շահագրգիռ զրույց ծավալվեց Սյունիքի մարզում աթլետիկայի զարգացման շուրջ, մանավանդ որ Կապանն ունի աթլետիկա մարզաձեւի լավ ավանդույթներ, իսկ անցյալ տարի Լեւոն Աղասյանը դարձավ հեռացատկի պատանիների Եվրոպայի չեմպիոն: Նախագահն իր խոսքում նշեց Կապանի մարզադաշտի վազքուղիները ռետինապատելու խնդրի մասին: Հանդիպմանը ներկա Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի Սյունիքի ներկայացուցչության տնօրեն Արշամ Սարգսյանը հաղորդեց, որ մարզի ղեկավարության հետ համաձայնություն է ձեռք բերվել մարզի քաղաքներում կրոսավազք անցկացնել: Ռ.Էմմիյանը Կապանում ներկա գտնվեց վաղամեռիկ հեռացատկորդ Մերուժան Սարգսյանի հիշատակին նվիրված ամենամյա մրցումներին, որոնց մասնակցում էին հանրապետության աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցի սաները:

# Քոլեջի տնօրենը վերընտրվեց

**Հոկտեմբերի 8-ին տեղի ունեցավ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրություն:**

ՊՈԱԿ-ի՝ այդ նպատակով հրավիրված խորհրդի նիստին խորհրդի 11 անդամից ներկայացել էր 10-ը: Մրցույթին (առանց քվեարկության իրավունքի) մասնակցում էր նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության վարչության գլխավոր մասնագետ Կարեն Մանուկյանը:

Մրցույթը սկսելուց առաջ նշվեց, որ մրցույթի նախապատրաստական աշխատանքները կազմակերպվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշման համաձայն: Այնուհետեւ խորհրդի անդամները ծանոթացան ՀՀ-ում նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենների ընտրության կարգին եւ դրան առնչվող նորմատիվ փաստաթղթերին:

Քոլեջի տնօրենի միակ հավակնորդ Կարեն Լազարյանը ներկայացրեց «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2015-20թթ. զարգացման ծրագիրը:

Խորհուրդը հավանություն տվեց ծրագրին, անցկացրեց հարցազրույց՝ ներկայացված ծրագրի շրջանակում:

Այնուհետեւ տեղի ունեցավ փակ քվեարկություն, որի արդյունքները հրապարակեց խորհրդի նախագահ Արարատ Լալաբեկյանը:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվեց Կարեն Լազարյանը, ում օգտին քվեարկեցին քվեարկության բոլոր մասնակիցները:

Նա Գորիսի պետական քոլեջի տնօրեն է ընտրվում երկրորդ անգամ: Առաջին անգամ ընտրվել է 2009թ. ապրիլի 14-ին:



ՖՈՏՈԼՈՒՐ

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերանորոգված գինեկոլոգիայի բաժանմունքում

# Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է Սյունիքի մարզ

էջ 1

**27-ին: Պատասխանատուների ներկայացմամբ, վերականգնվող 9.94 կմ ճանապարհահատվածից ներկայումս ասֆալտապատվել է շուրջ 7.9 կմ-ը: Երկրորդ հատվածի (Սիսիանի վերջնամասից մինչեւ Դաստակերտ համայնք) շինարարական աշխատանքներն սկսվել են 2015թ. հունիսի 11-ից, ավարտը նախատեսված է 2016թ. դեկտեմբերի 4-ը: Երկրորդ հատվածում, որի երկարությունը կազմում է 19.094 կմ, նախատեսված է իրականացնել 10.27 կմ ավազակոպճային ծածկ եւ 8.82 կմ նոր ասֆալտբետոնե ծածկ: Զեկուցվել է, որ ավազակոպճային ծածկի կառուցման աշխատանքներն ավարտված են, իսկ 8.82 կմ ճանապարհահատվածից ասֆալտապատվել է շուրջ 7.8 կմ:**

Սերժ Սարգսյանն այնուհետեւ մեկնել է Գորիս քաղաք, որտեղ «Քոնթուր Գլոբալ» ընկերության փոխնախագահներ Գարրի Լիվսլիի եւ Կարլ Շնադտի հետ միասին ներկա է գտնվել «Քոնթուր Գլոբալ հիդրոկասկադ» ընկերության գրասենյակի բացման արարողությանը, ծանոթացել էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Քոնթուր Գլոբալ» միջազգային ընկերության գործունեությանն ու հայաստանյան գրասենյակի ծրագրերին: Նախագահն այցելել է «Քոնթուր Գլոբալ հիդրոկասկադ»-ի մաս կազմող «Տաթեւ-հէկ», որտեղ նրան ներկայացրել են հէկի գործունեությունը եւ կասկադի արդիականացման ծրագիրը:

Սիսիանում եւ Գորիսում Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել բնակիչների հետ, զրուցել նրանց հետաքրքրող հարցերի, հիշյալ քաղաքային համայնքների առաջնահերթ խնդիրների շուրջ:

Մարզի Սյունիք համայնքում հանրապետության նախագահը ծանոթացել է «Սյունիք Ֆուդ» ՍՊԸ պահածոների գործարանի կառուցման աշխատանքների ընթացքին: Շինարարությունը, որի ընդհանուր արժեքը կազմում է 700 մլն դրամ, մեկնարկել է 2014թ. նոյեմբերին, ավարտը նախատեսվում է 2016թ. ապրիլին: Պատասխանատուների հավաստմամբ, շուրջ 5200քմ հողատարածքի վրա կառուցվում են արտադրամասը, հումքի եւ պատրաստի արտադրանքի պահեստը, կենցաղային շենքը, չորանոցը, կաթսայատունը, նյութական պահեստը եւ էլեկտրական ենթակայանը:

Ծրագրի իրականացման ընթացքում ներգրավվել է շուրջ 50 աշխատակից, որոնց միջին ամսական աշխատավարձը կազմում է շուրջ 150 հազար դրամ: Պահածոների գործարանը շահագործման հանձնվելուց հետո գործարանում կաշխատի մոտ 200 աշխատակից՝ երկու հերթափոխով, միջին ամսական աշխատավարձը կկազմի շուրջ 90 հազար դրամ:

Սերժ Սարգսյանը Սյունիք համայնքից մեկնել է մարզկենտրոն Կապան, որտեղ նախ այցելել է քաղաքի նորակառույց թիվ 2 ավագ դպրոց: Նախագահն այս կրթական հաստատություն այցելել էր նաեւ 2013թ., երբ ՀՀ կառավարության 2011թ. որոշմամբ հաստատված «Կրթական օբյեկտների շինարարություն» ծրագրի շրջանակներում դեռեւս շինարարական աշխատանքներ էին ընթանում, որի պատճառով դպրոցի ուսումնական գործընթացը կազմակերպվում էր քաղաքի այլ դպրոցներում: Հանրապետության նախագահը շրջել է վերակառուցումից հետո ուսումնական գործընթացն սկսած ավագ դպրոցում, ծանոթացել ստեղծված պայմաններին, զրուցել տնօրենության եւ ուսուցիչների հետ: Կապանի թիվ 2 ավագ դպրոցի կառուցման ընդհանուր գումարը կազմել է 933.6 մլն դրամ:

Նախագահին ներկայացրել են, որ կրթական համալիրը բաղկացած է ուսումնական եւ մարզադահլիճային մասնաշենքերից: Կրթօջախը նախատեսված է 450 աշակերտի համար (ներկայումս դպրոց է հաճախում 327 աշակերտ): Ուսումնական մասնաշենքը 3 հարկանի է, ունի նաեւ նկուղային հարկ: Մարզադահլիճի նախկին մասնաշենքը վերակառուցվել է: Համալիրի ողջ տարածքը ցանկապատված է եւ բարեկարգված: Տարածքում կառուցվել են մեծ թենիսի դաշտ, հանգստի գոտի, տարածքն ապահովվել է լուսավորությամբ: Տեխնիկական պայմանների համաձայն՝ կառուցվել են նաեւ գազամատակարարման, ջրամատակարարման եւ կոյուղու ներքին ու արտաքին ցանցերը, էլեկտրամատակարարման գծերը:



ՖՈՏՈԼՈՒՐ

«Գլոբալ քոնթուր հիդրոկասկադ» ՓԲ ընկերության գրասենյակի բացումը

Դպրոցին տրամադրվել է նոր գույք: 2015-2016թթ. ուստարում դպրոցում աշխատում է 39 ուսուցիչ՝ միջին ամսական աշխատավարձը՝ 129 հազար դրամ:



ՖՈՏՈԼՈՒՐ

Կապանի Գ.Նժդեհի հրապարակը

Կապանում Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել նաեւ քաղաքի բժշկական արդիականացված կենտրոնի բացման արարողությանը: Նորաբաց կենտրոնի շնորհիվ Սյունիքի մարզի եւ հատկապես Կապանի տարածաշրջանի բնակչությանն իրենց բնակավայրերում կմատուցվեն որակյալ, մատչելի եւ արդիական բժշկական ծառայություններ: Հիվանդանոցը հիմնանորոգվել է, հագեցվել գույքով եւ սարքավորումներով ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակում: Բուժհաստատությունում շրջայցի ժամանակ նախագահին ներկայացրել են իրականացված աշխատանքները, դրանց արդյունքում ստեղծված պայմանները եւ առաջարկվող բժշկական ծառայությունները: Նշվել է, որ արդիականացման գործընթացի շրջանակում հիվանդանոցն ապահովվել է հեռաբժշկության հնարավորություններով: Ամբողջովին փոխարինվել են երկու մասնաշենքի տանիքների ծածկերը, վերակառուցվել են միջնապատերը, տեղադրվել են բժշկական նոր վերելակներ, փոխարինվել են դռները, ինժեներական բոլոր ներքին ենթակառուցվածքները: Մոնտաժվել են նաեւ օդափոխության, քույրական ազդականչի, հակահրդեհային ազդարարման համակարգերը, համակարգչային ու հեռախոսակապի ներքին ցանցերը: Մրցութային գործընթացի արդյունքում տնտեսված միջոցների հաշվին տեղադրվել է ջեռուցման եւ տաք ջրամատակարարման նոր կաթսա, դիզելային գեներատոր, իրականացվել են նաեւ կենտրոնի արտաքին տարածքի բարեկարգման աշխատանքները, ներառյալ՝ ասֆալտապատում, արտաքին լուսավորության եւ եզրաքարերի տեղադրում, տարածքը եզրագծող ցանկապատի վերանորոգում: Երկու մասնաշենքերի միջեւ կառուցվել է նոր վերգետնյա անցում, վերանորոգվել է էլեկտրական ենթակայանը: Ծրագրի շրջանակում Կապանի բժշկական կենտրոնը հագեցվել է նաեւ ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով եւ պարագաներով: Կենտրոնին տրամադրվել են բարձր արտադրողականություն ունեցող բազմաֆունկցիոնալ ռենտգեն համալիր, ուլտրաձայնային հետազոտման եռաչափ սարք, որը կարող է իրականացնել նաեւ սրտի եւ անոթների հետազոտություն, տրեդմիլ համակարգ, թոքերի արհեստական օդափոխության սարք, դեֆիբրիլյատոր (սինխրոնիզացիայի հնարավորությամբ), ինչպես նաեւ ժամանակակից լաբորատոր եւ այլ սարքեր: Վիրասրահը հագեցվել է արդիական անհրաժեշտ միջոցներով: «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի լրացուցիչ վարկային ծրագրով «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել է 1.4 մլրդ ՀՀ դրամի (շուրջ 3մլն 154 հազար ԱՄՆ դոլար) ներդրում:

Սյունիքի մարզ աշխատանքային այցի շրջանակներում հանրապետության նախագահը մարզկենտրոն Կապանում այցելել է նաեւ քաղաքի՝ կառուցապատված եւ բարեկարգված կենտրոնական հրապարակ, որտեղ նախագահի ներկայությամբ տեղի է ունեցել ժամանակակից սարքավորումներով հագեցված, լուսաձայնային լուծումներով շատրվանների բացման արարողությունը: Սերժ Սարգսյանին ներկայացրել են կատարված աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 570 մլն ՀՀ դրամ. Կապան քաղաքի կենտրոնական հրապարակը, Կապանի քաղաքապետարանի եւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության միջեւ 2013թ. մայիսի 17-ին կնքված պայմանագրի համաձայն, 25 տարի ժամկետով բարեկարգման եւ կառուցապատման նպատակով հանձնվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին: Բարեկարգված տարածքների ընդհանուր մակերեսը, ներառյալ ջրային եւ կանաչապատ տարածքները, կազմում է շուրջ 2600քմ, որը ներառում է շատրվանները, կանաչապատ տարածքները, ժամանցի եւ զբոսանքի գոտիները:

Ծրագրի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2014թ. հունիսի 4-ին, ավարտվել՝ 2015թ. օգոստոսի 28-ին: Այդ ընթացքում մշտական զբաղվածություն է ունեցել կապալառու ընկերությունների 65 աշխատակից, որոնց միջին ամսական աշխատավարձը կազմել է շուրջ 260 հազար դրամ:

Նախագահը Կապանում մասնակցել է նաեւ քաղաքի օրվան ընդառաջ կազմակերպված տոնակատարություններին:

**ՀՀ նախագահի մամլո ծառայություն**

# ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Հասարակությունը պիտի ավելի համախմբված լինի, որպեսզի չարի սերմը բույն չդնի...»

էջ 1

Ներկայումս մոռանում են, որ նոր սերունդը կարողանում է պաշտպանել սեփական իրավունքները՝ անկախ դիմացինի՝ հովանավոր ունենալուց: Այդ գործով ձերբակալվել է երեք անձ, որից երկուսը՝ միջադեպի մասնակից, իսկ երրորդ անձն ընդհանրապես կապ չունի այդ միջադեպի հետ, պարզապես նրան կապում են իմ անվան հետ, ավելին ասեմ՝ այդ անձը նույնիսկ դեպքի վայրում չի եղել: Հրաձգությունն առաջինը սկսողն ազատության մեջ է, եւ համարձակվում եմ ասել, հովանավորներ ունի: Անկախ ամեն ինչից՝ ես համոզված եմ, որ ճշմարտությունն անպայման կբացահայտվի, իրական մեղավորները կստանան իրենց արժանի պատիժը: Դեպքը կատարվել է բազմամարդ վայրում, եւ, ինչպես ժողովուրդն է ասում, մախաթը պարկում չես թաքցնի:

**– Մամուլում լույս տեսած հրապարակումներից ակնհայտ է, որ հիմնական մեղադրանքը Ձեր դեմ է ուղղված: Ինչո՞վ եք պայմանավորում այդ մարդկանց կողմից հնչեցվող բացահայտ մեղադրանքը:**

– Ագարակը փոքր համայնք է, եւ այստեղ յուրաքանչյուրը տեղյակ է, թե իրականում ինչ է կատարվել: Բայց այդ մարդկանց հրահրմամբ Ագարակում տեղի ունեցածը հնչեղություն ստացավ հանրապետության ողջ տարածքում: Չնայած ես չէի ցանկանա, որ մեր քաղաքի անունը կապվի նմանատիպ արատավոր երեւույթների հետ: Անձը, ով մեղադրում է ինձ այս ամենի մեջ, իրականում կոնֆլիկտային մարդ է եւ տարիներ շարունակ ապօրինի գործունեություն է ծավալել: Երբ ես դեռ քաղաքապետ չէի, նա ինչ-ինչ ճանապարհներով սեփականաշնորհել է քաղաքի հիշեց ծառայության նախկին շենքը՝ ազգաբնակչությանը տեւական ժամանակ զրկելով այդ ծառայությունից: 2010 թվականից քաղաքապետարանը դատական քաշքշուկի մեջ է նրա հետ՝ կապված քաղաքում կառուցվելիք զբոսայգու տարածքի հետ: Բանն այն է, որ Մեղրի-Ագարակ հիմնադրամի ֆինանսավորմամբ նախատեսվում է կառուցել նոր զբոսայգի, որի նախագծային աշխատանքներն ավարտվել են, ֆինանսական հարցերը՝ լուծվել: Բայց գլխավոր պլանով նախատեսված այդ տարածքից մի հատված ապօրինաբար այդ մարդը ժամանակին զավթել է եւ հիմա հրաժարվում է վերադարձնել համայնքին: Զբոսայգու հատվածում, բացի նրանից, եւս չորս հոգի մասնաբաժին ունեին, բայց առանց պրոբլեմի եւ անշահախնդրորեն վերադարձրին համայնքին: Չորս եւ ավելի տարի է դատական ատյաններում ենք, առաջին ատյանում դատը շահեցինք, վերաքննիչ դատարանում նա բեկանեց գործը, վճռաբեկ դատարանում համայնքապետարանը շահել է եւ որոշել, որ տվյալ տարածքը ենթակա է ապամոնտաժման, բայց նա շարունակում է ընդդիմանալ: Կարճ ասած, իմ կարծիքով անձնական սուբյեկտիվ խնդիրներով է պայմանավորված նրա ներկայիս պահելաձեւը: Մենք ձգտում ենք ուշադրություն չդարձնել այդ ամենին, հանրության լայն շրջանակների վրա էլ նա որեւէ ազդեցություն չունի, իր ելույթներն այլ լսարանի համար են: Գիտե՞ք ինչ, գոյություն ունեն չգրված օրենքներ, բարոյական չափանիշներ, որոնք չպահպանողը հասարակության անունից խոսելու իրավունք չունի:

**– Եվ այնուհանդերձ ինչպե՞ս եք գնահատում Ագարակ քաղաքի օպերատիվ վիճակը, բարոյահոգեբանական մթնոլորտը:**

– Իրականում ցավալի է, որ հանրապետության այս գողտրիկ անկյունում հասարակությունը ժամանակ առ ժամանակ փոթորկվում է: Իմ համոզմամբ՝ չորս տարվա պարբերականությամբ անգամ նման երեւույթը նորմալ չէ: Նորից եմ կրկնում՝ ցավալի է, որ Ագարակը հանրապետությունում, մարզում նաեւ նման քողի տակ է երեւում: Մեր համայնքը թե՛ բարոյահոգեբանական մթնոլորտով, թե՛ ազգաբնակչության մակարդակով, թե՛ օրենքի հանդեպ ունեցած վերաբերմունքով օրինակելի է, եւ նմանատիպ երեւույթները չեն կարող խաթարել քաղաքի զարգացման բնականոն ընթացքը: Բայց, ինչպես ասում են, ընտանիքն առանց այլանդակի չի լինում:

**– Օգոստոսի 16-ին խոշոր պայթյուն է արձանագրվել Ագարակի գազի պահեստներում: Վերացվե՞լ են արդյոք դրա հետեւանքները:**

– Հուրախություն բոլորիս՝ միջադեպն առանց մարդկային զոհերի ավարտվեց: Երիտասարդ գործարար էր, նյութական մեծ վնաս կրեց, մեկ ակնթարթում կորցրեց տարիներով ձեռք բերածը, բայց կարեւորն այն է, որ չի հուսահատվել: Պետությունը նման դեպքերում փոխհատուցում չի տալիս: Պայթյունը տեղի է ունեցել իրանական մեքենայի պատճառով, բայց քանի որ պահեստները կառուցելիս տեխնիկական բոլոր նորմերը պահպանվել էին, երկրորդ պայթյուն չի եղել, ամբարված գազը հրդեհի հետեւանքով վառվել-վերջացել է: Պայթյունը եւս մեկ անգամ ապացուցեց, որ անվտանգության նորմերը պահպանելը բոլորիս շահերից է բխում:

**– ՊՆ նախարար Սեյրան Օհանյանի հերթական աշխատանքային այցն Ագարակում նշանավորվեց բնակարանամուտով: Ձեր հարցազրույցներում մշտապես ուրախությամբ եք նշում քաղաքում նոր շենքի վեր խոյացման մասին:**

– Վերջերս Ագարակում տեղի ունեցած միջադեպերի ֆոնին սա, թերեւս, ամենաոգեւորիչ իրադարձությունն էր մեր քաղաքում: Ագարակում բնակարանի ոչ բավարար քանակը հիմնախնդիր է: Մինչ այս քաղաքում մեկ այլ շենք էր կառուցվել ՊՆ-ի աշխատակիցների համար: Բնակարանամուտի օրը Սեյրան Օհանյանը նշեց, որ 2016թ. ծրագրերում ներառվել է նոր՝ երրորդ շենքի կառուցումը՝ կրկնակի մեծությամբ՝ 16 բնակարանով: Իրականում նմանատիպ ծրագրերը որոշակի առումով Ագարակում մեղմում են բնակարանային պահանջի հարցը: Այս պահին Ագարակում թե՛ դեմոգրաֆիական առումով, թե՛ սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմամբ իրավիճակն այնպիսին է, որ բնակարանաշինությունն ավելի կնպաստի բնակչության թվի աճին:

**– Այս անգամ քաղաք մտնելու պահին Կարճեւան գետի աղտոտվածությունն ավելի ակնհայտ էր: Ուսումնասիրվա՞ծ է արդյոք դրա ազդեցությունը մարդկանց եւ շրջակա միջավայրի վրա:**

– Ագարակ քաղաքի հիմնադրումից ի վեր այդ հեղեղատարը գործել է, որտեղից պարբերաբար կոմբինատի վքարային կեղտաջրերը, պոչանքները թափվել են գետ: Ծրագիր կա խողովակի մեջ անցկացնելով վքարները պակասեցնել: Բայց ծրագիրը կյանքի կոչելու համար ֆինանսական միջոցներ են պետք, որոնք այս պահին չկան: Կոմբինատի թափուկատարը գործում է, բայց վքարի դեպքում կեղտաջրերը լցվում են գետը, որից ազատվելու համար մոտ մեկ շաբաթ պիտի ջուրը հոսի: Պիտի նշեմ, որ արտադրության մեջ հնարավոր չէ բացառել վքարները: Մարդկանց եւ շրջակա միջավայրի վրա ազդեցությունն ուսումնասիրված չէ, բայց նշեմ, որ բնակչությանն այդ հարցն այնքան չի անհանգստացնում, որքան կարող է անհանգստացնել, ասենք, կոմբինատի աշխատանքի դադարը: Համայնքի բնակչության 90 տոկոսն Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում է աշխատում, եւ այնտեղ առաջացած յուրաքանչյուր խնդիրը հուզում է բնակչությանը:

**– Միջազգային բորսայում մետաղների, հատկապես պղնձի գների առումով ներկայումս ծանր վիճակ է, իսկ Ագարակի ՊՄԿ-ում հիմնականում պղնձի խտանյութն է: Որքանո՞վ է գների անկումն ազդել կոմբինատ-համայնք փոխհարաբերություններին. չէ՞ որ կոմբինատի միջոցներով համայնքում բավականաչափ սոցիալական հարցեր են լուծվում, ծրագրեր՝ կյանքի կոչվում:**

– Այս պահին կոմբինատում ֆինանսական դժվարություններ են առաջացել՝ կապված միջազգային շուկայում պղնձի գների հետ: Դե գիտեք, յուրաքանչյուր կանոնավոր աշխատանքում էլ «վքարներ» են լինում: Ես կարծում եմ՝ այդ հարցերը կլուծվեն, բոլոր դժվարությունները կհաղթահարվեն. սրանից ավելի վատ ժամանակներ էլ են եղել: Նախատեսված ծրագրեր կային, որոնց իրագործումն այս պահին դադարեցվել է: Մենք ըմբռնումով ենք մոտենում ստեղծված իրավիճակին, նրանց խնդիրները մերն ենք համարում եւ բավարարվում նրանով, որ կոմբինատի աշխատանքը չդադարեցվի: Բայց ցավալիորեն պիտի արձանագրենք՝ եթե նախկինում կոմբինատն ուներ զարգացման խնդիր, այժմ ունի եղած մակարդակի պահպանման խնդիր:

**– Հանրապետության նախագահի նախընտրական խոստումներից էր նաեւ այս տարածաշրջանի գազիֆիկացումը: Ի՞նչ փուլում են այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները:**

– Անկեղծ ասած համայնքապետարանը ծանոթ չէ այդ ծրագրերին, հուսադրող է փաստը, որ գազիֆիկացման աշխատանքների ծախսերի առյուծի բաժինը, որ խողովակների ձեռքբերմանն է վերաբերում, արդեն լուծված է: Սպասում ենք հաջորդ քայլին. կառավարությունը շինարարության համար գումար պիտի հատկացնի, որ ավելի քիչ է, քան խողովակներ ձեռք բերելու համար նախատեսվածը: Հուսով եմ՝ մոտ ժամանակներս այդ հարցը նույնպես լուծում կստանա:

**– Եթե անցնենք միջազգային քաղաքականությանը, պիտի նշենք, որ ամենակարեւոր իրադարձություններից մեկը, թերեւս Իրանի Իսլամական Հանրապետությունից պատժամիջոցները հետ վերցնելն էր: Ագարակում՝ որպես սահմանադուռ եւ այդ երկրի հետ անմիջական կապ ունեցող քաղաք, ի՞նչ է փոխվել Վիեննայի համաձայնագրից հետո, որի արդյունքում տնտեսական պատժամիջոցները չեղյալ հայտարարվեցին:**

– Գիտեք ինչ, սա բավականին բարդ գործընթաց է, որի պտուղները քաղելու համար տեւական ժամանակ է հարկավոր: Իմ տեղեկություններով՝ դրանից հետո զգալիորեն մեծացել է Իրան-Վրաստան տրանզիտը: ԻԻՀ-ն բավականին արագ տեմպերով զարգանում է, որ, բնականաբար, իր ազդեցությունն է ունենալու մեր տարածաշրջանի վրա: Բացի դրանից՝ Ագարակն Իրան-Հայաստան սահմանադռնից վերածվեց Իրան-Եվրասիական Միության սահմանադռան: Առայժմ օրենսդրության, հարաբերությունների կարգավորման, ձեւավորման փուլն է: Իմ կարծիքով՝ մենք թեւակոխում ենք տնտեսական բոլորովին այլ իրականություն, որտեղ խաղի կանոններն անպայման վերանայվելու են: Ես մեծ փոփոխություններ եմ ակնկալում, եւ այս ամենը հաշվի առնելով՝ մեծ պատասխանատվություն է առաջանում ավելի զարգացնել համայնքը՝ իր դերին համապատասխան լինելու հստակ նպատակադրմամբ:

**– Մեղրու ինքնահոս ոռոգման համակարգի ծրագիրն իրագործման փուլում է: Ի՞նչ ընթացքի մեջ են Ագարակին վերաբերող հատվածում կատարվող աշխատանքները:**

– Որքանով տեղյակ եմ, ծրագրի իրագործման երրորդ փուլն է մեկնարկել, նախագծերը պատրաստ են, մրցութային փուլը՝ ընթացքի մեջ:

**– Այսօր տարբեր հարթակներում բուռն քննարկումներ են ընթանում նոր սահմանադրության կամ, ինչպես ասում են, սահմանադրական փոփոխությունների մասին: Հետաքրքիր է, որպես համայնքի ղեկավար, ի՞նչ կարծիք ունեք այդ մասին, եւ ինչպես են ագարակցիներն արձագանքում այդ իրադարձությանը:**

– Իմ կարծիքով՝ սահմանադրական փոփոխությունների հարցը նեղ մասնագիտական է, եւ մասնագետներն ավելի ճիշտ կներկայացնեն դրա թեր եւ դեմ կողմերը: Առայժմ ամբողջովին չեմ ուսումնասիրել փոփոխությունները, բայց լսելով հանձնաժողովի անդամներին՝ կարող եմ ասել, որ մեծ մասամբ համաձայն եմ առաջարկվող դրույթներին: Ինչ վերաբերում է ընդդիմախոսներին, ապա իմ խորին համոզմամբ, նրանք ընդդիմանում են, որպեսզի ընդդիմանան՝ շատ հաճախ առանց համոզիչ հիմնավորումների: Քաղաքում սահմանադրական փոփոխությունների մասին կարծիքները հակասական են ու իրարամերժ:

**– Համայնքների խոշորացման Ձեր դիրքորոշմանը մեր նախորդ հրապարակումներում անդրադարձել եք: Հիմա, երբ այդ գործընթացն արդեն մեկնարկել է, շարունակո՞ւմ եք մնալ նույն կարծիքին:**

– Այո՛, համայնքների խոշորացումը ժամանակի հրամայականն է, եւ կարծում եմ՝ ցանկացած փոփոխություն ավելի դրական տեղաշարժ կբերի, քան ներկայիս վիճակը: Հասարակագիտությունն ուսումնասիրելով՝ կարող եմ ասել, որ ամեն ստեղծված իրավիճակ բնական է եւ տվյալ ժամանակաշրջանի պահանջը, ամեն հետեւանք անպայման իր պատճառներն ունի:

**– Հայ-ադրբեջանական սահմանին ստեղծված լարվածությունից, ինչպես ասում են, պատերազմի հոտ է գալիս: Դուք սերտ համագործակցության մեջ եք Ագարակում տեղակայված զորամասի հետ, ինչպե՞ս եք գնահատում բանակի բարոյահոգեբանական մթնոլորտը: Հաճախ կարելի է լսել՝ եթե այս անգամ պատերազմ լինի, ներկայիս սերունդն այնպես չի կարողանա պայքարել, ինչպես Արցախյան պատերազմի տարիների սերունդը:**

– Ճիշտ են ասում, որ ներկայիս սերունդը տարբերվում է հաղթանակ կերտած սերնդից, բայց միայն ու միայն դրական իմաստով: Իմ համոզմամբ՝ հայի զենքի մեջ դիրքը լքելը, սկսած գործը ավարտին չհասցնելը չկա: Վստահաբար կարող եմ ասել, որ այսօրվա մեր զինվորը, հրամանատարն ավելի բարդ խնդիրներ են լուծում, քան այն տարիներին: Պատերազմից հետո ծնված սերունդը գործ ունի ավելի հզորացած թշնամու հետ եւ տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ առավել ծանր պայմաններում է հայտնվել: Եվ որ ամենակարեւորն է, հաջողությամբ խնդիրներ է լուծում արդեն որպես պետության զինվոր՝ պետական մտածողություն ունեցողի հստակ գաղափարով: Իհարկե, անհամեմատելի է այսօրվա սերունդը միայն ու միայն իր դրական հատկանիշներով պայմանավորված, եթե առաջխաղացում չլինի, ուրեմն ազգը դատապարտված է կործանման: Բանակը մեր հասարակության կարեւորագույն ձեռքբերումն է, մասնիկը, որին քննադատել չի կարելի:

**– Փոքր, միջին բիզնեսի զարգացման առումով վերջին տարիներին ինչպիսի՞ զարգացումներ են եղել քաղաքում եւ արդյո՞ք դրա համար կան նախադրյալներ:**

– Ես միշտ ասել եմ, որ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի նման հսկայի առկայության դեպքում շատ դժվար կերեւա փոքր եւ միջին բիզնեսի կայացվածությունը: Բայց քայլեր կան՝ կապված մաքսակետի գործունեության հետ: Եթե թվարկելու լինեմ այդ ձեռնարկությունները, ապա պատկերը համեստ կլինի: Ներկայումս գործում են մաքսային տերմինալը, գազի կայանը: Մենք կտրուկ փոփոխության ենք սպասում՝ ոռոգման ջրի առկայությամբ պայմանավորված, որը կնպաստի հատկապես գյուղմթերքների մշակմանը:

Ագարակում աշխատուժի պակաս կա, եւ այն թանկ է գնահատվում: Նույն աշխատանքը, որ իրականացվում է մարզի տարբեր քաղաքներում, այլ վարձատրությամբ է իրականացվում մեր քաղաքում: Եթե թվային տվյալներով ասեմ, մեզ մոտ 20-25 տոկոսով ավելին է: Կոմբինատին կից արբանյակ հիմնարկներ ստեղծելը ռեսուրս է քաղաքի համար, որի մասին մտածում ենք: Այնպես որ այդ առումով դեռեւս պարծենալու բան չունենք:

**– Ագարակի արվեստի դպրոցը՝ հիմնանորոգված, կահավորված, արդեն իր դռներն է բացել սաների առաջ: Ձեր վերջնական գնահատականը կատարված աշխատանքների վերաբերյալ:**

– Ագարակի արվեստի դպրոցի հիմնանորոգումը ՀՀ նախագահի նախընտրական ծրագրի դրույթներից էր, որն այսօր արդեն իրականություն է: Սա քաղաքի համար խոշոր քայլ է, կարեւոր եւ երկար սպասված, եթե մի քիչ չափազանցնենք, պատմական իրադարձություն: Շենքը, որ վթարային էր, բացի դրանից գտնվում էր քաղաքի կենտրոնում եւ ոչ ակնահաճո տեսք տալիս, այսօր ամբողջովին հիմնանորոգվել է, կահավորվել, մերձակա տարածքը նույնպես բարեկարգվել է, եւ քաղաքի այդ հատվածն արդեն հպարտանալու առիթ է տալիս: Ինչպես մեկ անգամ արդեն նշել եմ,

# Կայացա՞ծ, թե՞ չկայացած քննարկում

**Ջրամատակարարում**

էջ 1

մնացել՝ արդյունքում ջուր չստանալով:

Ինչպես նախորդ հրապարակումներում ենք նշել, կապանցիները այս ամիսների ընթացքում ներքին ջրատար ցանցում կատարվող աշխատանքների պատճառով բազում խոչընդոտների են բախվել՝ ջրի պղտորություն, անկանոն ջրամատակարարում, քանդված փողոցներ եւ այլն:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային մասնաճյուղի «Կապան» տեղամասի շահագործման եւ աշխատանքների ծառայության պետ Հովիկ Գեւորգյանը խմելու ջրի որակի հետ կապված նշեց, որ պղտորությունը պայմանավորված էր շինարարական աշխատանքներով ու նաեւ տեղումներով: Բացի դրանից՝ նա նշեց, որ այս ծրագրի վերջնական արդյունքում կապանցիները կստանան ստորգետնյա աղբյուրի կամ, ինչպես ասում են, կապտաժային ջուր, որ ավելի որակյալ է եւ որի չափաբաժինը բավարար է քաղաքի բնակչությանը ջուր մատակարարելու համար: Արդյունքում կհրաժարվենք Գեղի գետի ջրից, որ տարիներ շարունակ ֆիլտրվել եւ մեր բնակչությանն է մատակարարվել:

Ներկաներին մտահոգում էր նաեւ վերանորոգման ընթացքում օգտագործված խողովակների որակը: Պատասխանատուները հավաստիացրին, որ միանգամայն որակյալ խողովակ է օգտագործվել՝ նախատեսված բացառապես խմելու ջրի համար:

Ինչպես ասում են, աշխատանքը վերջնական չի համարվում, եթե չեն վերացվում դրա առաջացրած նաեւ բացասական հետեւանքները, այս դեպքում՝ փողոցների քանդված հատվածները: Այստեղ, կարծեք, բնակիչների դժգոհությունը մի քիչ ավելին է: «Կապանի ճՇՇ» ԲԲԸ-ի (շինարարական աշխատանքներն իրականացնող կազմակերպություններից) ինժեներ Սերգեյ Առուստամյանը նշեց, որ Ասիական զարգացման բանկն այս հարցի լուծման համար ծրագրի ֆինանսավորման վերանայում պիտի կատարի, որովհետեւ բնակչին հետաքրքիր չէ, թե ինչ է նախատեսվել ծրագրով. նա առնվազն պահանջում է իր բակի նախկին տեսքը վերականգնել: Այս հարցը «Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ-ի տեխհսկիչ Խիկար Միրզոյանն այսպես պարզաբանեց. *«Մինչ աշխատանքները սկսելը նախօրոք կատարվել է չափագրում, թե քաղաքի որ հատվածում է աշխատանքի կատարման ընթացքում վնասվելու ասֆալտը, որը պիտի վերականգնեն: Իսկ այն հատվածներում, որտեղ քայքայված ասֆալտ է եղել, ասֆալտապատում չի լինելու: Մարդիկ տարիներ առաջ միջոցներով կարգի են բերել իրենց բակը, բայց ասենք 5 մետրանոց հատվածում մենք կատարել ենք 1 մետր աշխատանք, որպեսզի այդ հատվածն ասֆալտապատենք, պիտի մնացած հատվածն էլ ասֆալտապատ լինի, որ կարողանանք կապակցել: Հնարավոր չէ մի փոքր հատվածը վերանորոգել, մնացածը թողնել. ճանապարհի որակն այդպես հնարավոր չէ ապահովել»:*

Հ.Ասլանյանը նշեց, որ ճանապարհը վերականգնելու համար երբեմն ստիպված ջրագծի փոխման համար նախատեսված գումարից պիտի վերցնեն, քանի որ լրացուցիչ գումար դեռեւս չի նախատեսվել, թեպետ նրանք այդ մասին հարց են բարձրացրել:

Համենայն դեպս բնակիչներին ֆինանսական մասը շատ քիչ է հետաքրքրում, նրանց պետք է նորմալ ճանապարհ, թեկուզեւ նախկին տեսքով:

Որոշ թաղամասերի անկայուն ջրամատակարարման, ջրի ճնշման եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ պատասխանատուները փորձեցին տալ սպառիչ պատասխան՝ նշելով, որ այդ բոլորը կկարգավորվեն ծրագրի այս փուլի ավարտից հետո, իսկ մինչ այդ պիտի համբերատար լինել եւ ըմբռնումով մոտենալ առաջացող խնդիրներին:

Նշենք, որ բացի Ասիական բանկից, այս ուղղությամբ աշխատանքներ են կատարվում նաեւ Եվրոպական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: Ինչեւէ, ծրագիրը շարունակական է լինելու, որի արդյունքում 100 տոկոսով կվերանորոգվի ներքին ջրատար ցանցը, իսկ դրա համար մի քանի տարի է անհրաժեշտ:

Ամփոփելով նշենք, որ թեեւ շատերը հրաժարվեցին մասնակցել քննարկմանը՝ պատճառաբանելով օրենքի խախտումը եւ լքելով դահլիճը, այնուամենայնիվ քննարկումը, ըստ կազմակերպիչների, համարվեց կայացած:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

---

109 մլն դրամ հատկացրել է Հայաստանի սոցներդրումների հիմնադրամը, որ այժմ կոչվում է տարածքային զարգացման հիմնադրամ, 4 մլն դրամ՝ Մեղրի-Ագարակ հիմնադրամը, որի միջոցները գոյանում են քաղաքացիների ներդրումներից եւ 5մլն դրամ քաղաքապետարանը՝ ֆոնդային բյուջեից:

**– Ձեր կարծիքը մարզի բարոյահոգեբանական մթնոլորտի, հասարակական-քաղաքական-գործարար իրավիճակի մասին: Ի՞նչն է մեզ պակասում ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու համար:**

– Գործարար առումով բախտն է պակասում. իմ պաշտոնավարման այս յոթ տարվա մեջ արդեն երկրորդ ֆինանսական ճգնաժամն ենք փորձում հաղթահարել: Մեր մարզում տնտեսությունը, կարելի է ասել, բեւեռացված է, այսինքն՝ մեծ մասամբ հանքարդյունաբերությունն է գերակայում: Եթե միջազգային շուկայում մետաղի գները բարձրանում են, ոգեւորվում ենք, հեռանկարային ծրագրեր կազմում, բայց եթե իջնում են, կրկին բախվում ենք նոր խնդիրների:

Համարձակ կարող եմ ասել, որ մարզային իշխանությունների կատարողական կարգապահությունը 100 տոկոս է, բազմաթիվ բացասական երեւույթների վերացումը, ինչպիսիք կոռուպցիոն ռիսկերն են, տարբեր թղթավարական, դատական քաշքշուկները, իշխանությունների ուշադրության կենտրոնում են: Ինչպես ընտանիքը, այնպես էլ մարզն առանց այլանդակի չի լինում, եւ, ինչպես ասում են, ոչ մի բարի գործ առանց նախանձողի չի լինում, միշտ էլ գտնվում են մարդիկ, ովքեր փորձում են խառնակչություններ, արատավոր երեւույթներ սերմանել: Ինչքան խառնակչությունները քիչ լինեն, այնքան իշխանությունը շատ ժամանակ կունենա զբաղվելու երկրի զարգացման գործերով:

Հասարակությունը պիտի հասկանա, որ նմանատիպ արատավոր երեւույթներին տուրք չտալով է պայմանավորված իր բարեկեցությունը եւ ավելի համախմբված լինի, որպեսզի, ինչպես Գուսան Աշոտն է ասում, չարի սերմը բույն չդնի…

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆ**

---

# Նորամուտ՝ Ագարակի արվեստի դպրոցում

էջ 2

լիր ունենալն է այսօր երազանք, որ անպայման իրականություն կդառնա: Համայնքապետը նշեց նաեւ, որ ֆոնդային բյուջեից հնարավոր եղավ ներդրում կատարել շնորհիվ համայնքի բնակիչների՝ հարկերի ու տուրքերի հանդեպ ունեցած կարգապահության: **«Համայնքապետարանի ֆինանսական կարգապահությունն ինքնանպատակ չէ: Ձեր վճարած ամեն լուման նպատակային է ծախսվում, հասարակության զարգացվածության չափանիշներից է բնակիչների ֆինանսական կարգապահությունը»,** – նշեց քաղաքապետը:

Նա առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, որի հետեւողականության շնորհիվ ծրագիրն իրականություն դարձավ: Ինչպես նաեւ երախտագիտություն հայտնեց Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրեն Էռնա Բարխուդարյանին՝ երեք տարի շարունակ դպրոցում դասեր կազմակերպելու նպատակով ժամանակավոր դասասենյակներ տրամադրելու համար:

## Դպրոցն ու կոլեկտիվը

2015-16 ուստարին Ագարակի արվեստի դպրոցը դիմավորեց 202 աշակերտով՝ ընդունելով 60 երեխա՝ նախորդ տարվա 48-ի փոխարեն: **«Մեծ հետաքրքրություն է նկատվում հատկապես պարի բաժնի հանդեպ: Նորաբաց դիզայնի բաժին նույնպես դիմողները շատ էին, բայց ուսուցչի Ֆիզարձակուրդ գնալու պատճառով ժամանակավորապես փակել ենք բաժինը»,** – նշեց տնօրեն Հասմիկ Մարկոսյանը:

Դպրոցում գործում են հետեւյալ բաժինները՝ դաշնամուրային, լարային, փողային, ազգային նվագարաններ, վոկալի, պարի, կերպարվեստի, կիրառական արվեստի (անցյալ ուստարվանից): Տնօրենի տեղեկացմամբ՝ մոտ 90 աշակերտ հաճախում է պարի, զուգահեռաբար նաեւ մասնակցում է սոլֆեջիոյի ու դաշնամուրի դասերին:

Այս տարի դպրոցի դասատուներից Զոյա Գեւորգյանն անցավ վաստակած հանգստի: **«Ամեն ինչ վերջակետ ունի: Ճիշտ է, ֆիզիկապես դպրոցում չեմ, բայց հոգով մշտապես իմ հարազատ կրթօջախի հետ եմ, ապրում եմ նրա հաջողություններով եւ խնդիրներով: Երիտասարդ կադրերին խորհուրդ եմ տալիս սիրել երեխաներին, համբերատար լինել, ինքնակրթությամբ զբաղվել, անընդհատ պրպտել, նորը գտնել եւ իրենց գիտելիքի ողջ պաշարը փոխանցել աշակերտին: Շատ հանգիստ եմ հեռանում դպրոցից, բայց այն զգացողությունն ունեմ, որ ինչ-որ բան կիսատ եմ թողել. դե սա, կարծում եմ, բնորոշ է բոլոր ուսուցիչներին, քանզի նրանք ողջ կյանքում պիտի ուսուցանեն»,** – առանձնակի խանդավառությամբ նշեց վաստակաշատ մանկավարժը:

Ուսուցիչն իրեն լիարժեք չի զգում, եթե իրենից հետո չի թողնում գործի շարունակողներ: Այդ առումով Զոյա Գեւորգյանն իր առաքելությունն ավարտել է, քանի որ այսօր արվեստի դպրոցում դասավանդում են իր աշակերտները: Ինչպես նաեւ հպարտորեն նշում է, որ իր աշակերտները կա՛մ բժիշկ են դարձել, կա՛մ երաժիշտներ:

35 տարվա մանկավարժական փորձ ունեցող քանոնի դասատու Անահիտ Սարգսյանը նշեց, որ մի պահ կար, որ արվեստի հանդեպ կարծես հետաքրքրությունը մարել էր, բայց հիմա աստիճանաբար արթնանում է: **«Երեւի պայմանավորված է մարդկանց սոցիալական վիճակի համեմատաբար բարելավմամբ»,** – եզրակացնում է Ա.Սարգսյանը:

Դաշնակահար Անահիտ Աղաջանյանը երբեւիցե չի փոշմանել իր ընտրած մասնագիտության համար, ավելին՝ ասում է, որ եթե երկրորդ անգամ ծնվեր, անպայման նույն մասնագիտությունը կընտրեր: **«Ներկայիս սերունդն ավելի ճարպիկ է, ակտիվ, անկաշկանդ, աչքաբաց, զարգացած, միայն թե շատ տեղեկատվությունը շեղում է նրանց ուշադրությունը»,** – նշեց դասատուն:

32 տարվա փորձ ունեցող Գոհար Հովսեփյանն այն կարծիքին է, որ տարիների հեռավորությունից նայելով՝ դաշնամուրային բաժնի հանդեպ հետաքրքրությունը նվազել է: Ինչ վերաբերում է երաժշտականի դասատուների խնդիրներին, ապա հիմնականն աշխատավարձի, կարելի է ասել, նվազագույն լինելն է, իսկ «դա ողջ հանրապետության մասշտաբով է»:

Տնօրենից տեղեկացանք ուսուցիչների ժամաքանակի եւ աշխատավարձի մասին: Նա նշեց. **«Ձգտում ենք դասատուների ժամաբաշխում կատարելիս հավասարակշռություն պահպանել, դե իսկ աշխատավարձն էլ բոլոր տեղերում նույնն է՝ հանրապետությունում ընդունված նվազագույն աշխատավարձի շեմը պահպանվում է, ժամերի ավելացման դեպքում ավելին են ստանում»:**

Անցյալ ուսումնական տարվանից բացված կիրառական արվեստի բաժնի դասատու Հասմիկ Հարությունյանը նոր բաժնի մասին հետեւյալը տեղեկացրեց. **«Կիրառական արվեստն արհեստի եւ արվեստի որոշ ճյուղերի սինթեզն է: Այդ համադրությունից ծնվում են յուրահատուկ գործեր: Դեռեւս շատ չեն այդ բաժին ընդունված երեխաները, բայց աստիճանաբար ավելանում են, քանի որ արվեստի այս ճյուղի հանդեպ հետաքրքրությունը մեզանում մեծանում է»:**

Հաճելիորեն նկատեցինք, որ դպրոցում գերակշռում են երիտասարդ կադրերը, ովքեր սիրում են իրենց աշխատանքը, հաճույքով դասավանդում եւ ձգտում ունեն ավելիին հասնելու (խմբ.՝ համենայն դեպս առաջին հայացքից նման տպավորություն ստացանք):

Էստրադային վոկալի երիտասարդ դասատու Ռաֆայելլա Մկրտչյանը դասավանդել է նաեւ մայրաքաղաքի երաժշտական դպրոցներից մեկում եւ բացարձակ տարբերություն չի տեսնում փոքր եւ մեծ քաղաքների երեխաների ընդունակությունների, արվեստի հանդեպ ունեցած հետաքրքրության առումով: **«Հուսով եմ՝ իմ աշխատանքի արդյունքում կկարողանամ բացահայտել տաղանդավոր երեխաների, ովքեր մեծ հաջողությունների կհասնեն»,** - նշեց Ռ.Մկրտչյանը:

Փոքրիկների ազատամտությունը, սեփական կարծիքն արտահայտելու կարողությունը, ամեն հարցի շուրջ իրենց դիրքորոշումն անկաշկանդ արտահայտելու ունակությունը նրանց հետ աշխատելու ընթացքում ավելի մեծ պատասխանատվություն են պահանջում:

## Դպրոցի ձեռքբերումները

**«Երբ տնօրեն ընտրվեցի, արգելեցի ինչ-որ մեկին համոզել արվեստի դպրոց հաճախելու համար, քանի որ, ինչպես փորձն է ցույց տալիս, այդ երեխաները կիսատ են թողնում ուսումը: Ընդհակառակը, դպրոց ընդունվելը մրցութային դարձրի եւ պիտի խոստովանեմ, որ այն իր արդյունքը տվեց. արգելվածին ավելի շատ են ձգտում,** – նշեց տնօրենը եւ հավելեց, – **քաղաքում այլընտրանք չկա, եւ, բնական է, որ բոլորը մեզ են դիմում»:**

Երեք տարի տեւած շինարարությունը չխանգարեց, սակայն, որոշակի հաջողություններ գրանցելու առումով: Ընդհակառակը, ինչպես տնօրենը նշեց, հաջողություններ գրանցեցին հենց այդ ժամանակահատվածում: Մասնավորապես շվիի 5-րդ դասարանի աշակերտ Դավիթ Ասատրյանը, Գյումրիում մասնակցելով «Վերածնունդ» միջազգային 7-րդ մրցույթ-փառատոնին, արժանացավ ժյուրիի համակրանքին, իսկ դաշնակահար Լիլիթ Խաչատրյանը հաջողությամբ մասնակցեց Առնո Բաբաջանյանի անվան պատանի եւ երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթ-փառատոնին: Դպրոցի երգչախումբը մասնակցել է մշակույթի նախարարությանը կից գեղարվեստական կենտրոնի կազմակերպած փառատոնին եւ հաջողությամբ ելույթ ունենալով՝ հնարավորություն ձեռք բերել համերգային ծրագրով մեկնել արտասահմանյան որեւէ երկիր: Դպրոցի «Արփի» պարային համույթը հրավեր է ստացել մեկնելու Իրանի Իսլամական Հանրապետության հայկական համայնք:

Ֆինանսական խնդիրներ դպրոցը չունի, աշխատավարձը ժամանակին ստանում են, բացի դրանից՝ քաղաքապետն ամեն հարցում աջակցում է հաստատությանը: **«Մեր քաղաքապետը գովազդի կարիք չունի, եթե պատկերավոր ասեմ, նա Ագարակի ֆանատն է, ով ապրում է այս քաղաքով, նրա հոգսերով՝ նրա բարօրության համար ոչինչ չխնայելով»,** – ոգեւորությամբ նշեց տնօրենը:

Արվեստի հանդեպ սեր առաջացնելու, դպրոցի աշխատանքները պրոպագանդելու նպատակով տարեկան առնվազն երկու անգամ ուսուցիչների մասնակցությամբ համերգ է կազմակերպվում. հանդիսատեսի դերում աշակերտներն ու ծնողներն են: Հաճախակի են կազմակերպում բաց դասեր, արվեստի վերաբերյալ կինոդիտումներ, մասնակցում մայրաքաղաքից այցելած խմբերի համերգներին: Մայրաքաղաքից հեռավորությունը կրճատելու համար Երեւան այցելելիս երեխաներին պարտադիր տանում են տուն-թանգարաններ, մշակութային այլ օջախներ:

Այնուամենայնիվ, մնում ենք այն կարծիքին, որ արվեստի որեւէ ճյուղի հետ առնչություն ունեցող մարդն առանձնանում է հասարակության մեջ՝ իր գեղագիտական ճաշակով, հարուստ ներաշխարհով, ինչու չէ, նաեւ շրջապատի երեւույթներն արագ ընկալելու կարողությամբ: Քաղաքում եւ դպրոցում անցկացվող միջոցառումներին մշտապես մասնակցում են դպրոցի սաները, որ լրացուցիչ հպարտանալու առիթ է տալիս թե՛ ծնողներին, թե՛ ուսուցիչներին:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Թերեզա Ստեփանյանը եկել է, որ մնա...

## Գրական Սյունիք

Հայ պոեզիայի մեջ կանանցից շատերն իրենց առաջին բանաստեղծությունները լրատվամիջոցներում տպագրելուց կամ լավագույն դեպքում առաջին մեկ-երկու փոքրիկ ժողովածու լույս ընծայելուց հետո ասպարեզում այլեւս չեն երեւացել: Համոզված ենք, որ Թերեզա Ստեփանյանը եկել է, որ մնա, եկել է, որ կանգնի Սյունյաց մեծերի կողքին ու մեծանա նրանց նման:

Թերեզա Ստեփանյանը ծնվել է Սիսիանում: Գերազանցությամբ ավարտել է Երեւանի Օրջոնիկիձեի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1972 թվականին՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը՝ ֆրանսերեն լեզու եւ գրականություն մասնագիտությամբ: Կատարել է մանկավարժական, կոմերիտական, կուսակցական, արհմիութենական աշխատանք: 1995-2002թթ. ղեկավարել է ՀՀ պաշտպանության նախարարության թարգմանչական բաժինը:

Ստեղծագործել սկսել է ուսանողական տարիներից, սակայն առաջին բանաստեղծությունները տպագրել է միայն 2012 թվականին, եւ այն էլ բարեկամների, մտերիմների բազմաթիվ հորդորներից հետո: Դրա փոխարեն իրար հետեւից լույս են տեսել «Առեղծվածներ» (2012), «Անդունդն ի վեր», «Այ կաչաղակ, կաչաղակ», «Կատակով եւ լուրջ» բանաստեղծությունների ժողովածուները, Վ.Հյուգոյի «Ֆրանսիա, Բելգիա» նոթերի թարգմանությունը, բոլորն էլ՝ 2015թ.: Ահա այս գրքերի շնորհանդեսն էր հեղինակի ծննդավայրում, ասել է թե՝ նրա քննությունն էր հայրենակիցների առջեւ: Իսկ այդ «քննությունն» ընդունելու համար Սիսիանի մշակույթի հիմնանորոգված պալատ էին եկել քաղաքի մտավորականության ընտրանին, ուսանողներ, բարձր դասարանցիներ, բազմաթիվ հյուրեր Երեւանից, մարզի բնակավայրերից: Առաջ անցնելով ասենք, որ միջոցառումն անցավ բարձր մակարդակով, որի մեջ, անտարակույս, մեծ էր Սիսիանի երաժշտական դպրոցի մանկավարժների ու սաների դերակատարումը: Այս գնահատականը մերը չէ, այլ միջոցառմանը մասնակցող արհեստավարժ երաժիշտ հյուրերինը: Լսարանում համակ ուշադրություն էր բանասիրական գիտությունների դոկտոր Շչորս Դավթյանի ելույթի ժամանակ: Վերջինս առաջին անգամ չէ, որ բարձր գնահատական է տալիս Թ.Ստեփանյանի պոեզիային: Եվ դա արել է ոչ միայն նման լսարանների առջեւ, այլեւ ավելի լայն շրջանակում՝ «Հայաստանի Հանրապետություն» լրագրի ընթերցողների համար՝ «Անկեղծությամբ եւ բնությամբ թաթախված» (12.03.2015թ.):

Բանաստեղծուհու «Առեղծվածներ» ժողովածուի առաջաբանի «Երկու խոսքում» Շչորս Դավթյանը գրում է. *«Մի՞թե զարմանալի չէ, որ բանաստեղծություն գրելու մերօրյա համաճարակից դուրս, մեր կողքին ապրում է մի համեստ անհատականություն, որ ոչ միայն փորձում, այլեւ ուղղակի ստեղծում է մի ինքնատիպ ու հրաշալի քնարերգություն՝ ձեւի ու բովանդակության առումներով՝ կատարելության ձգտող չափանիշներով»:*

Խոսելով Թերեզա Ստեփանյանի պոեզիայի մասին՝ մի այլ առիթով գրականագետը նկատում է. «....Ինձ թվում է, որ հեղինակն ամեն տողի ծննդյան հետ մի կաթիլ արցունք է խառնում, ավելի ճիշտ՝ արցունքով լվանում է տողը»:

Թ.Ստեփանյանի բանաստեղծական պատկերները ծնվում են ինքնաբուխ: Զգացվում է, որ դրանք թղթին հանձնելու համար նա ավելորդ ջանքեր չի գործադրում, ինչպես նկատեց վաստակաշատ ուսուցչուհի Սվետա Համբարձումյանը՝ «բառարանի օգնությանը» չի դիմում: Ստեղծագործ մտքի այդ մանրանկարչական գոհարներն իրար հետ միանալով ստեղծում են մի ամբողջական կտավ: Թերեզա Ստեփանյանի բանաստեղծությունները պարզ են ու միաժամանակ տաղանդով շաղախված, դրանք ծնվել են նրա հոգուց ու սրտից, դրա համար էլ ընթերցողին սրտամոտ են, այնքան սրտամոտ, որ կարդալուց հետո թաքուն մտմտում ես՝ երանի ես գրած լինեի: Թող դատի ընթերցողը.

*Անսկիզբ, անհայտ ժամանակից*
*Արձակված պահ եմ,*
*Պտույտի մեջ եմ այս քաոսի,*
*Տիեզերական ասրղնյութ եմ,*
*Շունչ առած կայլ եմ,*
*Հավերժական ոսկրափոշի...*
*Տիեզերքի լաբիրինթներում*
*Նյութ եմ, արդյոք, թե՞ հականյութ*
*Այսքան իրական պատրանքի...*
*****
*Ճերմակ-ճերմակ, մաքրամաքուր*
*Ձյուն է իջնում երկինքն ի վար,*
*Ձյուն է գալիս նրբափետուր,*
*Գորշությունը ծածկում ափվար:*
*Հաղորդությամբ ճերմակափայլ*
*Ձյուն է հղում երկինքը վար,*
*Թողություն է տալիս երկրին*
*Արարիչը հրաշափառ:*
*Մերկ ծառերը՝ սառն ու անհույս,*
*Դառնում են լուռ հարսնացուներ,*
*Հագնում են ժանյակահյուս*
*Հազարաթեւ երազանքներ...*
*****
*Գիտեի,*
*Որ մի օր կիտվելու եմ,*
*Որ մի օր ամպելու եմ*
*Ու հետո մաղվելու եմ կամաց...*

*Գիտեի, որ մի օր լցվելու եմ,*
*Որ մի օր երգելու եմ*
*Ու հետո լսվելու եմ կամաց...*

*Գիտեի, որ մի օր փթթելու եմ*
*Ու հետո թոշնելու եմ*
*Ու մի օր անցնելու եմ կամաց...*

*Գալի՜ք, ինձ ասա՝ իմ կարճ օրերի*
*Շարանը դեռ կա՞...*
*Հարցնում եմ, քանզի արագ ես թերթվում,*
*Որ դառնաս ներկա...*
*****
*Ինչ կորցրել եմ,*
*Ափսոսում եմ շատ վաղուց,*
*Ինչ գրել եմ,*
*Ախր, իմն էր ի վերուստ...*
*****
*Ինչ պահեցի,*
*Կորավ, գնաց,*
*Լոկ տվածս*
*Ինձ հետ մնաց...*
*****
*Թե վաղ կորցնեմ*
*Ուշ գտածս,*
*Պիտի ասեմ.*
*Ողորմած Տեր,*
*Որ կատակ էր,*
*Շնորհածդ...*

Կարող է թվալ, թե բերված տողերը եւ հատկապես հայրենի եզերքին նվիրված բանաստեղծությունները նմանություն ունեն բանաստեղծուհու մեծ հայրենակցի՝ Համո Սահյանի ստեղծած պատկերներին: Բայց ինչպես նշեց բանասիրական գիտությունների դոկտոր Շչորս Դավթյանը՝ իսկ ի՞նչ վատ բան կա դրանում:

Ամիսներ առաջ բանաստեղծուհու գրքերի շնորհանդեսն էր Երեւանում՝ Հայաստանի ազգային գրադարանում: Այնտեղ էլ բազմաթիվ ելույթներ եղան, այդ թվում՝ պոեզիայի իսկական գիտակների ելույթներ: Տպավորվել է հատկապես բանասիրական գիտությունների թեկնածու, «Հայաստան» հրատարակչության տնօրեն Վահագն Սարգսյանի ելույթը: *«Երբ առաջին անգամ կարդացի Թերեզա Ստեփանյանի մի քանի բանաստեղծությունները, մտածեցի, որ դրանք կրում են Հ.Սահյանի ազդեցությունը: Շարունակեցի կարդալ: Հետո հայտնաբերեցի մեծն Թումանյանի ազդեցությունը, հետո տեսա Տերյանի, Չարենցի, Սեւակի թողած կնիքները: Ինքս ինձ ասացի՝ կանգ առ. ժամանակն է հետեւություն անել: Իսկ հետեւությունս հետեւյալն է. իսկական, կայացած բանաստեղծը պետք է իր մեջ ներառի, կրի տաղանդավոր նախնիների ստեղծածը: Թերեզա Ստեփանյանը կրում է դա»*:

Վաստակաշատ մանկավարժ Նինել Աղայանն ափսոսանքով նշեց, որ ինքը շատ ուշ է ծանոթացել բանաստեղծուհու ստեղծագործություններին, բայց դա չխանգարեց, որպեսզի նա բարձր, արհեստավարժ մակարդակով վերլուծի օրվա հերոսի պոեզիան, ինչպես վեր կլուծեր հայ պոեզիայի մեծերի ստեղծագործությունները, ինչպես կվարվեր, եթե գիտական թեզի համար հոդված պատրաստեր: Ելույթի վերջում նա ավելացրեց. *«Սիրելի Թերեզա, իմ ձեռքին է քո «Անդունդն ի վեր» ժողովածուն: Ցանկանում եմ, որ շուտով ծնվի հերթական ժողովածուն՝ «Բարձունքն ի վեր» վերնագրով»:*

Իր գնահատականների մեջ առատաձեռն եղավ նաեւ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Սվետա Համբարձումյանը, որովհետեւ, ինչպես ինքն էր գտնում, Թերեզա Ստեփանյանի ստեղծածն արժանի է դրան:

Հանդիսությունում ելույթ ունեցան նաեւ «Հայաստան» ամսագրի գլխավոր խմբագիր Տիգրան Նիկողոսյանը, Սիսիանի պիոներ պալատում աշխատելու տարիներին բանաստեղծուհու սան Իոնարա Ասրյանը եւ տողերիս հեղինակը: Վերջում շնորհակալական խոսք ասաց եւ իր ստեղծագործական ծրագրերի մասին պատմեց բանաստեղծուհին:

Երկու խոսք Թ.Ստեփանյանի թարգմանությունների մասին: Թարգմանությունները ֆրանսերենից են. Ալֆրեդ դը Մյուսե, Բերանժե, Ռեյմոն Դեվո: Ամենածավալուն գործը Վ.Հյուգոյի «Ֆրանսիա, Բելգիա» նոթերի գիրքն է: Ընթերցողի սեղանին է մեծ ֆրանսիացու ստեղծագործության առաջին հատորը: Գրքի երկրորդ կեսը տպագրության ընթացքի մեջ է:

Թ.Ստեփանյանին շատ հոգեհարազատ ֆրանսիացիները մի հրաշալի ասացվածք ունեն. «Ժամանակն անցնում է, նրան արգելք չես հանդիսանա, բայց այնպես արա, որ այն քո կողքով չանցնի»: Անտեսելով ժամանակի անդարձելիության մասին այս հիշեցումը՝ Թ.Ստեփանյանը կարողացել է իր ընթերցողին 150 տարով հետ տանել ու նրա հետ ճանապարհորդել Ֆրանսիայի ու Բելգիայի մեծ ու փոքր քաղաքներով, Սենայի վրայով ու նրա ափերով, լինել միջնադարյան ամրոցների ավերակներում, հիանալ գոթական ճարտարապետությամբ տաճարների հոյակապ տեսքով: Միայն հատուկ անուններն են հուշում, որ օտար երկրի մասին օտար մարդու գրած երկ ես ընթերցում: Թերեզայի շնորհիվ այն շատ հայկական է ստացվել: Կարդալիս զգում, տեսնում ես մարգագետինների կանաչին նստած վաղորդյան ցողը, նրա թարմությունն ու սառնությունը զգում բոբիկ ոտներիդ: Բանասեր Սվետա Համբարձումյանը նկատեց. *«Ես ֆրանսերեն չգիտեմ, բայց կարդալով Թերեզա Ստեփանյանի թարգմանությունները, համոզվեցի, որ նա կատարելապես տիրապետում է թե մայրենուն եւ թե ֆրանսերենին, դրանց, առաջին հայացքից չերեւացող, բայց իրականում գոյություն ունեցող ամենափոքր ու խրթին մանրուքներին»:*

Իսկ մնացածն էլ թող ընթերցողն ասի՝ ընթերցելով գիրքը:

Հ.Գ. Ընթերցողներից շատերի մոտ կարող է հարց առաջանալ՝ ի՞նչ բան է գրքի շնորհանդեսը: Արդյո՞ք գովազդի նորահայտ ձեւ չէ դա: Այդպես է, բայց ոչ միայն դա: Գրքի շնորհանդեսի միջոցով փորձ է արվում վերականգնել ընթերցող-գիրք կապը, որը վերջին տարիներին շատ է թուլացել: Բանը հասել է այնտեղ, որ կյանքի մեծ մասը գիր ու գրականության հետ անցկացրած անհատը եւս հեռացել է գրքից: Իսկ եթե երբեմներբեմն էլ նրանք ձեռքերը մեկնում են գրապահարաններին, ապա այնտեղից՝ բառարան, լավագույն դեպքում՝ հանրագիտարան վերցնելու համար, եւ միայն հազվագյուտ դեպքերում՝ գեղարվեստական որեւէ երկ:

Իսկ մեր շնորհանդեսը ծառայեց իր նպատակին: Դահլիճից հեռացող ուսանողները, բարձր դասարանցիները, սիսիանցի գրասերներն իրենց հետ տանում էին հայրենակցուհու մակագրությունը կրող նրա մտքի գոհարները: Համոզված ենք, որ նրանք այդ գրքերը թերթելու են, կարդալու են, փոխանցելու են այլ մարդկանց, համեմատելու համար գուցե նաեւ այլ հեղինակների գիրք են ձեռքերը վերցնելու:

**ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի դեսպանի երկօրյա այցը Սյունիք

Աշխատանքային այցով սեպտեմբերի 30-ին Սյունիքի մարզ այցելեց ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը: ԵԱՀԿ գրասենյակի եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գլոբալ էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրի օժանդակությամբ եւ Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ վերականգնվել է Սյունիք եւ Աճանան համայնքները ոռոգման ջուր մատակարարող մայր առվի չորս կիլոմետրանոց հատվածը: Դեսպանը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանի հետ եղավ մայր առվի՝ Կապանի թռչնաֆաբրիկայի հարեւանությամբ գտնվող հատվածում, որտեղ տեղի ունեցավ ջրագծի բացման արարողություն: Ինչպես տեղեկացնում էր այդտեղ տեղադրված վահանակը, չորս կմ ջրատարի նորոգումը մինչեւ 100 հեկտար վարելահողերի ոռոգման, նաեւ մոտ 30 հեկտար վարելահողերի աղտոտվածությունից զերծ մնալու հնարավորություն է ընձեռում: Ջրատարի վերականգնումը հատկապես կարեւորվում է նրանով, որ Սյունիք համայնքը մարզկենտրոնի բնակչությանը մատակարարում է բանջարաբոստանային մշակաբույսեր, եւ հողերի աղտոտումը, բանջարանոցները եւ տնամերձերը թափոնաջրերով ոռոգելը բնապահպանական վտանգ են պարունակում: Ի դեպ, Սյունիքի գյուղապետ Սամվել Սարգսյանը նշեց, որ Սյունիք համայնքի տարածքում ջրատարի նորոգման հարց կա եւ խնդրեց աջակցել այդ խնդրում, ինչը հնարավորություն կտա նվազագույնի հասցնել ոռոգման ջրի կորուստները: Նաեւ հավաստիացրեց, որ աջակցության դեպքում համայնքն էլ որոշակի ֆինանսական ներդրումով հանդես կգա:

Սյունիքի մարզպետն իր խոսքում կարեւորեց ջրատարի նորոգումը, նաեւ նշեց, որ կարեւոր է ինչքան նորոգելը, այնքան էլ եղածը պահպանելը: Խորհրդային տարիներին այդտեղով էլ ջրագիծ էր անցնում, բայց պատշաճ խնամքի չարժանանալով՝ շարքից դուրս էր եկել:

Այնուհետեւ Սյունիքի մարզպետը եւ ԵԱՀԿ դեսպանն այցելեցին Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր՝ արեւային ջրատաքացուցիչ համակարգի ներդրման ծրագրի դիտարկման համար: Այս ծրագիրը եւս կյանքի է կոչվել ԵԱՀԿ գրասենյակի եւ ՄԱԿ-ի զարգացման գլոբալ էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրի օժանդակությամբ: Ծրագիրն իրականացրել է «Կայուն զարգացում» հասարակական կազմակերպությունը: Նոր համակարգը հնարավորություն է տվել բավարարել դիսպանսերի սանիտարական պահանջները, մասնավորապես տաք ջրի մատակարարումը: Դիսպանսերի տնօրեն Արարատ Վարդանյանի փոխանցմամբ՝ արեւային ջրատաքացուցչի գործարկումով տարեկան տնտեսվում է երկու միլիոն դրամ: Ա.Սորոկինը եւ Սյունիքի մարզպետը ծանոթացան դիսպանսերի աշխատանքային պայմաններին, օժանդակ տնտեսությանը, զրուցեցին բուժանձնակազմի հետ, հետաքրքրվեցին կադրերով ապահովվածությամբ, հայտնվեց, որ այս պահին դիսպանսերում 63 հիվանդ է բուժվում:

Օրվա երկրորդ կեսին մարզկենտրոնի «Ոսկե Կապան» ռեստորանում կազմակերպվեց ընդունելություն դեսպան Անդրեյ Սորոկինի անունից՝ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) փաստաթղթի՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի ստորագրման 40-րդ տարեդարձի առթիվ: Ընդունելությանը մասնակցում էին հասարակական կազմակերպությունների եւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Դեսպանը ներկայացրեց Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) սկզբնավորումը, նրա գործունեության ուղղությունները, նշեց, որ տասնհինգ տարի առաջ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի հիմնումը խթան եղավ ԵԱՀԿ շրջանակներում Հայաստանի հետ համագործակցության համար: Կապանում Սյունիքի մասնաճյուղի գրասենյակը գործում է 2006 թվականից:

Նախօրեին Սյունիքի մարզպետն ու դեսպանն այցելել էին Գորիսի տարածաշրջանի Շինուհայր գյուղում գործող բրդի վերամշակման արտադրամաս եւ կարպետի գործման արհեստանոց՝ ծանոթացել բրդի վերամշակման, թելի, գորգագործական արտադրամասում իրականացվող աշխատանքներին: Այն հիմնվել է «Գորիսի կանանց ռեսուրս կենտրոնի» կողմից ԵԱՀԿ-ի աջակցությամբ: Արհեստանոցում աշխատում է 43 կին, ովքեր մշակում են տեղացի մատակարարներից ստացված բուրդը եւ գործում կարպետ, գորգ, գուլպաներ ու այլ բրդյա արտադրանք:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



# Համո Սահյանի բանաստեղծական գլուխգործոց «Պապի» հերոսը՝ բրոնզաձույլ արձանի փեսքով

**Համո Սահյանի ստեղծագործական ակունքները, իհրավի, իր բնաշխարհում են: Նրա գրի ու գեղագիտության հիմքերն իր լեռների ու ձորերի մեջ են:**

Սահյանական բնաշխարհի առանցքը Լորն ու Լորաձորն են: Իսկ Լորաձորը, որտեղ Սիսիանի տարածաշրջանի հինգ գյուղերն են՝ Դարբաս, Լոր, Գետաթաղ, Շենաթաղ, Լծեն, մի ուրիշ ձոր էլ ունի՝ Դարբասի ձորը, որտեղ հավերժորեն փռված է Սյունյաց աշխարհի հնամենի գյուղերից մեկը՝ Դարբասը:

Դեռեւս 1953թ. Համո Սահյանը երկու բանաստեղծություն է նվիրել Դարբասին ու համանուն ձորին՝ «Դարբասի ձորը» եւ «Երբ ամեն անգամ»:

Դա, իհարկե, երիցս խոսում է Համո Սահյանի՝ իր մայր գյուղի հարեւանությամբ գտնվող Դարբասի, Լորաձորի այդ հատվածի հանդեպ ունեցած սիրո մասին: Բայց այդ սերն ու վերաբերմունքը փոխադարձ էին: Դարբասում նույնպես բանաստեղծին համարել եւ համարում են իրենց զավակը, հպարտանում նրանով: Եվ ինչպես Լորում, Դարբասում նույնպես, շատերն են Համո Սահյանի մասին խոսելիս հիշում նրա գործերը եւ հանպատրաստից արտասանում:

Դարբասում, պարզվում է, խնկարկելի է ոչ միայն ինքը՝ բանաստեղծը, այլեւ նրա կերպարներից շատերը՝ իրենց խոհականությամբ, իմաստնությամբ:

Եվ դրանցից մեկը, անշուշտ, մեր գրականության լավագույն կերպարներից մեկն է, Համո Սահյանի քնարերգության կարեւոր գործող անձանցից մեկը՝ Խաչիպապը կամ պարզապես Պապը:

Պապը ոչ միայն գերդաստանի նահապետն է, այլեւ աշխատասիրության, բարության եւ ազնվության խորհրդանիշը:

Այդ թեմայով գրված գործերից լավագույնը, անտարակույս, «Պապը» բանաստեղծությունն է, որը նաեւ Համո Սահյանի գլուխգործոցներից է, դասական արժեքի վերածված ստեղծագործություն:

Պապը երեւում է նաեւ «Վերադարձ», «Եվ ի՞նչ իմանա», «Չտեսնեի» գործերում, «Դաղձի ծաղիկ» ժողովածուում:

Առաջին հայացքից Համո Սահյանի պապն իր նմաններից ոչնչով չտարբերվող նահապետական մի կերպար է.

*Իմ պապը փնկել է*
*Մեր գյուղի շիվերը,*
*Իմ պապը պայտել է*
*Մեր գյուղի ձիերը:*
*Իմ պապը մեր գյուղի*
*Պատերը շարել է*
*Եվ բոլոր կամերը*
*Մեն-մենակ քարել է...*

Մինչդեռ պապը, կարծեք, կեցության չափանիշ է դառնում բոլորի եւ բոլոր ժամանակների համար:

Եվ քանի որ ինքն էլ բնության մի մասն է՝ որպես մի բուռ արդար հող, խառնվում է իր գոյության հազարամյա պատմությանը:

Բանաստեղծությունն ավարտվում է մարդու փոխակերպության եւ այլագոյության փիլիսոփայությամբ.

*Մի օր էլ, երբ հանկարծ*
*Ծալվել են ծնկները,*
*Ջարմանքից քարացել,*
*Ամոթից շիկնել է:*
*Թողել է նա մաճը*
*Եվ շունչը պահել է,*
*Եվ հերը քրքինքը*
*Ծակատին պաղել է:*
*Եվ պապը ակոսում*
*Պառկել ու քնել է,*
*Խառնվել այն հողին,*
*Որ իրեն սնել է:*

Եվահա ոչ միայն Դարբասում ու Սիսիանում, այլեւ ամբողջ Սյունիքում հայտնի Ստեփանյան գերդաստանի զավակներ Արամ եւ Արմեն Ստեփանյանների մեջ միտք է հղացել՝ քանդակի տեսքով հավերժացնել պապի կերպարը՝ հիմքում դնելով Համո Սահյանի «Պապը» բանաստեղծությունը:

Շատ հետաքրքիր եւ աննախադեպ այդ գաղափարը բարձր մակարդակով կյանքի է կոչել քանդակագործ, Երեւանի գեղարվեստի ակադեմիայի քանդակի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, վաստակավոր նկարիչ, ՀՀ նախագահի եւ պետական մրցանակների դափնեկիր Գետիկ Բաղդասարյանը:

Արդյունքում՝ բարձրարժեք ու բարձրաճաշակ մի գործ, բրոնզաձույլ մի արձան (ճարտարապետ՝ Նունե Պետրոսյան): Քանդակն ավելի քան բնական է, ինչպես բնական է Համո Սահյանի բառն ու բանը:

Գետիկ Բաղդասարյանը Համո Սահյանի մտերիմներից էր եւ նրա արվեստի երկրպագուներից: Համո Սահյանի մի քանի փոքրածավալ քանդակներ է ստեղծել, հեղինակն է նաեւ բանաստեղծի հուշարձանի, որ 2004թ. տեղադրվեց Սիսիանի կենտրոնական հրապարակում:

Մեզ հետ զրույցում ահա թե ինչպես ներկայացրեց պապի հուշարձանը Գետիկ Բաղդասարյանը. **«Դասական ոճի քանդակ է, ֆիգուրը՝ բրոնզաձույլ, 2,5մ բարձրությամբ: Պատվանդանը բազալտից է՝ 3մ x 3մ x 50սմ չափսերով: Պապը հիշեցնում է ծառ՝ արմատներով հայրենի հողի մեջ ընկղմված, որը հավերժորեն կենդանի է: Կերպարը լրացվում է դեռահաս աղջկա քանդակով, ով գրկին գառ ունի. դա մաքրության, անմեղության, ազնվության, նոր ու գալիք սերունդների խորհրդանիշն է: Մեծ իմաստով դա հայի հավերժության խորհրդանիշն է, մեր հող ու ջրի տիրոջ խորհրդանիշը»:**

Պապի արձանի մասին մեր պատկերացումն ամբողջացնում է Արամ Ստեփանյանը. **«Այս հողը մեզ են ավանդել մեր նախնիները, մենք պետք է արժանապատիվ տերը լինենք մեր երկրի եւ նույն կերպ փոխանցենք գալիք սերունդներին: Պապը՝ հայրենի հողից սկիզբ առած, այս հողի տերն է, իսկ մաքրության եւ ապագայի խորհրդանիշ աղջիկը նոր սերնդի կերպավորումն է: Եվ այդ ամենը միասին հայի ու Հայաստան աշխարհի հավերժությունն են արտացոլում»:**

Համո Սահյանի որդին՝ Նաիրի Սահյանը, ով նույնպես մասնակցում էր տոնակատարությանը, ուղիղ կապ չի տեսնում «Պապը» բանաստեղծության եւ ստեղծված քանդակի միջեւ (թեեւ հիմքում, նրա կարծիքով, այդ բանաստեղծությունն է ընկած), բայց եւ բրոնզաձույլ պապի մեջ յուրաքանչյուր ոք, արդարացիորեն, իր պապին է տեսնում:

Ըստ Նաիրի Սահյանի. **«Պապի արձանն ինձ շատ դուր եկավ, հրաշալի գործ է: Մտահղացումը շատ լավն է, գործն էլ հիանալի է արել Գետիկ Բաղդասարյանը: Արձանը խոր իմաստ ունի. դա մեծերի, ավագ սերնդի հանդեպ հարգանքի արտահայտություն է, ինչը հիմա մեզանում պակասում է»:**

Պապի բրոնզաձույլ արձանը տեղադրվել է Դարբասի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու բակում, որտեղ հոկտեմբերի 4-ին հավաքվել էին հարյուրավոր մարդիկ Սիսիանից, Գորիսից, Կապանից, մարզի գյուղերից ու մայրաքաղաքից:

Ողջույնի եւ օրհնության խոսքով հանդես եկավ Դարբաս համայնքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու եւ հարակից յոթ գյուղական համայնքի հոգեւոր հովիվ, արժանապատիվ տեր Ընծա քահանա Միրզոյանը:

Ելույթներ ունեցան Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Ստեփանյան գերդաստանի ներկայացուցիչ Արմեն Ստեփանյանը, Դարբասի համայնքի ղեկավար Մայիս Միրզոյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Շչորս Դավթյանը, ուրիշներ:

Արձանի բացման արարողությունը վերածվեց մեծ ու հաճելի տոնակատարության, որին առանձնակի շուք հաղորդեցին Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի երգի ու պարի խմբակների սաների ելույթները:

Եկեղեցուն կից գործող բրուտագործության, նկարչության եւ ուլունքագործության խմբակների սաներն էլ ցուցադրեցին իրենց լավագույն ստեղծագործությունները:

Ի դեպ, կիրակնօրյա դպրոցը եւս գործում է Ստեփանյան եղբայրների հովանավորությամբ:

Հանդեսը, ինչպես եւ սպասվում էր, չէր կարող լինել առանց ասմունքի. սահյանական պոեզիայի մի շարք գործեր ներկայացրին Լորի դպրոցի աշակերտները:

Հուշարձանի բացման, այդ առիթով հայրենի բնօրրանին ու ամբողջ Լորաձորին տոնական օր պարգեւած Ստեփանյան գերդաստանին վերստին երախտագիտության խոսք ենք հղում:

Պապի հուշարձանի ստեղծումը այդ գերդաստանի հերթական նախաձեռնությունն է: Բայց առաջինը՝ ընտանիքի ավագի՝ Ներսես Ստեփանյանի մահվանից հետո: Եվ պապի՝ բրոնզաձույլ արձանի տեսքով վերադարձով, կարծեք, յուրօրինակ սեր եւ պատկառանք է արտահայտվում նաեւ Ներսես Ստեփանյանի, գերդաստանի մյուս մեծերի հիշատակի հանդեպ:

Այդ գերդաստանի մտքով ու ջանքով է կառուցվել Դարբասի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին (նավակատիքը տեղի է ունեցել 2010թ. մայիսի 5-ին):

Ներսես Ստեփանյանի եւ որդիների ներդրումով է 2012-ին վերակառուցվել գյուղի մերձակայքի միջնադարյան կամուրջը՝ Արզվանի կամուրջը:

Այդ գերդաստանի ներդրումով են 2010թ. Շամբում գործարկվել պահածոների եւ ջրերի գործարանները, որոնք ոչ միայն հանրապետության ամենաարդիական ձեռնարկությունների շարքում են, այլեւ մոտ 100 հոգու համար կայուն աշխատատեղ են, ինչը մեծ նպաստ է Լորաձորի գյուղերի բնակչության զբաղվածության խնդրի լուծման, ինչպես եւ տարածաշրջանի գյուղերում աճեցվող պտղի ու բանջարեղենի մթերման գործում:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Աշխարհի առաջնությունից՝ մեկ արծաթ, երկու բրոնզ

Ռուսաստանի Դաշնության Անապա քաղաքում սեպտեմբերի 22-ից 27-ը կայացել է քիքբոքսինգի «WAKO» վարկածով աշխարհի գավաթի «Ադամանդ-2015» մրցաշար: Ներկայացուցչական այդ մրցմանը (մասնակցում էին 40-ից ավելի երկրի մոտ 1800 մարզիկ) հանդես եկան Սյունիքի մարզի քիքբոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի չորս մարզիկ: Նրանցից երեքը արժանացան մրցանակի. Շանթ Դավթյանը (57 կգ քաշային կարգ), Արայիկ Ավետիսյանը (37 կգ) դարձան բրոնզե մեդալակիր, իսկ Արտյուշա Ավետիսյանը՝ 52 կգ քաշային կարգում,հասավ մինչեւ եզրափակիչ, բայց վճռական գոտեմարտում պարտություն կրելով, բավարարվեց արծաթե մեդալով:

- 2007-ից ի վեր աշխարհի առաջնության չէինք մասնակցել, տղաները փոքր-ինչ կաշկանդված հանդես եկան, այլապես կարող էին ավելի բարձր տեղեր գրավել, լարվածության պատճառով չկարողացան դրսեւորել իրենց ողջ ունակությունները, - պատմում է ակումբի մարզիչը՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյանը եւ ավելացնում, - ռուս եւ ուկրաինացի բռնցքամարտիկների մարզական կարգն էապես բարձրացել է, նրանց հետ մենամարտելը դժվար է, բայց մյուս կողմից բարերար ազդեցություն է ունենում իմ սաների մարզավիճակի բարելավման վրա:




Վերջին ժամանակներում թե՛ ուսումնամարզական հավաքների, թե՛ մրցումների մասնակցելը հովանավորում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Վահե Հակոբյանը, ում երախտագիտություն են հայտնում ինչպես ակումբի մարզիչն ու սաները, այնպես էլ վերջիններիս ծնողները: Ակումբը իրավեր է ստացել մասնակցելու Ուկրաինայում կայանալիք միջազգային մրցաշարի: Մարզիչն ու սաները հուսով են, որ այս անգամ եւս հնարավորություն կունենան դրսեւորելու իրենց կարողությունները:

Ի դեպ, սեպտեմբերի 29-ին կայացել է ՀՀ քիքբոքսինգի ազգային ֆեդերացիայի նիստը, որում ֆեդերացիայի փոխնախագահ է ընտրվել Արայիկ Սարգսյանը:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը հոկտեմբերի 6-ին ընդունեց մարզիկներին եւ նրանց մարզչին, շնորհավորեց մրցանակային տեղեր գրավելու առիթով, հետաքրքրվեց նրանց մարզումներով եւ նոր հաջողություններ մաղթեց:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

# Գառնիկ Առաքելյան

**Կյանքի 70-րդ տարում, տեւական հիվանդությունից հետո, վախճանվեց լեռնահանքային արդյունաբերության երախտավոր Գառնիկ Մեխակի Առաքելյանը:**

Ծնվել է 1946թ. հունիսի 20-ին Ղափանում՝ ծառայողի ընտանիքում: 1950թ. ընտանիքը տեղափոխվել է Տանձավեր, ավարտել է գյուղի յոթնամյա դպրոցը, այնուհետեւ միջնակարգ- մասնագիտական կրթություն է ստացել Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում: Խորհրդային բանակի շարքերում ծառայելուց հետո աշխատել է Ղափանի պղնձահանքային կոմբինատում նախ՝ որպես էլեկտրաքարշավար, այնուհետեւ՝ հերթափոխի պետ: 1968թ. ընտրվել է կոմբինատի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար: ՀԿԿ կենտկոմի որոշմամբ 1973-1977թթ. ընդունվել եւ ավարտել է Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցը:

Գառնիկ Առաքելյանը 1977թ.-ից կուսակցական աշխատանքի է անցել, նշանակվել է Ղափանի կուսշրջկոմի հրահանգիչ, 1980-ին ընտրվել է Ղափանի հանքվարչության կուսկազմակերպության քարտուղար, 1983 թվականից արդեն ղեկավարել է Կապանի եւ Քաջարանի միացյալ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կուսակցական կազմակերպությունը: Նույն տարում ընդունվել եւ 1988-ին ավարտել է Մոսկվայի լեռնային ինստիտուտը: 1990թ. ստանձնել է Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնօրենի պաշտոնը՝ աշխատելով մինչեւ 2003թ.:

Կոմբինատում նրա պաշտոնավարման տարիները մեր երկրի համար մի բարդ ժամանակաշրջան էր: Հայ-ադրբեջանական հակամար-



տությունը, հաղորդակցության ուղիների շրջափակումը ծայրաստիճան դժվարին էին դարձրել թե՛ արտադրության համար անհրաժեշտ նյութերի ներկրումը, թե՛ ձեռնարկության արտադրանքի՝ խտանյութի առաքումը: Կոմբինատի տնօրենի մեծագույն ջանքերի գնով լուծում ստացան թե՛ նյութերի ներկրման, թե՛ արտադրանքի իրացման հարցերը: Այդ դժվարին ժամանակներում կոմբինատի միջոցներից տեղական բյուջեին փոխանցվեց մոտ հինգ միլիոն դոլարին համարժեք դրամ, որ կազմում էր Կապան քաղաքի բյուջեի 93 տոկոսը: Դրան զուգահեռ կարեւոր նշանակություն տրվեց նոր կազմավորվող բանակին ցույց տրվող օգնությանը, մասնավորապես զորամասին ուղարկվեց անհրաժեշտ քանակությամբ դիզելային վառելիք եւ սննդամթերք:

2005 թվականից հետո Գառնիկ Առաքելյանի կենսագրությունը եւս կապված էր լեռնահանքային արդյունաբերության հետ: 2006-2008թթ. հատուկ լեռնափրկարար ծառայությունում փոխտնօրեն, իսկ 2008-2012թթ.՝ «Լեռ-էքս» ՍՊ ընկերությունում արտադրության գծով տնօրեն:

Գառնիկ Առաքելյանը բազմիցս խրախուսվել է կառավարության, նախարարության եւ Սյունիքի մարզպետարանի կողմից: Սպարապետ Վազգեն Սարգսյանի կողմից արժանացել է հատուկ շնորհակալության բանակաշինությանը սատարելու համար:

Կյանքում եւ աշխատանքում Գառնիկ Առաքելյանը խստապահանջ, կարգապահ անձնավորություն էր, առօրյա շփումներում՝ անմիջական:

**Մի խումբ ընկերներ**

---

**ԿՈՐԵԼ Է** Կապանի N7 միջնակարգ դպրոցի 1991-92 ուստարվա շրջանավարտ Վահագն Արտուշի Ստեփանյանի 074236 ատեստատը: Համարել անվավեր:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար:**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/,
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2015թ. նոյեմբերի 18-ին՝ ժամը 15:00-ին, Սյունիքի մարզի Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, Բարիկավան 3/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 028561287, 098309022 հեռախոսահամարներով:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցի Ֆիզիկայի, Ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 18-ին՝ ժամը 14:00-ին, Գեղանուշի միջն. դպրոցում, Հասցեն՝ գ. Գեղանուշ, Վերին թաղ. 4:

Տեղեկությունների համար զանգահարել (0285)2-44-87, 077-76-88-36 հեռախոսահամարներով:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, ֆիզիկայի, աշխարհագրության ուսուցչի թափուր տեղերի համար:**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/,
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Եղեգի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 6 00 44, 077 44 91 00 հեռախոսահամարներով:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (9.25 դասաժամ, մեկ տարի ժամկետով) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշոտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 20-ին՝ ժամը 12:00-ին, «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

---

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
**(091) 45 90 47,**
**(077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 16.10.2015թ.: